América tiene más intereses en Turquía que en cualquier otro país, posiblemente más que toda Europa junta. Este interés no es político sino humanitario. En 1819, el Comité Americano del Comisionado para Misiones Extranjeras, comenzó a trabajar en el Imperio Otomano y ha continuado haciéndolo hasta ahora por casi un siglo, trabajando con vigor y visión de estadistas. El primer paso fue producir la Biblia en el idioma vernácula de la gente. Los misioneros evitaron ser sectarios. Introdujeron en el país la imprenta y la literatura periodística, medicamentos modernos y la sanidad, el hospital moderno, nuevas industrias y empresas comerciales, educación occidental y que culminaba en bien organizados colegios y escuelas de graduados.

No pocas de estas instituciones, con el total apoyo y cooperación de la Comisión Americana, se han convertido en independientes del control de las organizaciones misioneras. Algunas de estas instituciones, tienen una reputación internacional, y están cumpliendo una tarea de beneficio duradero para América, Asia y Europa. Algunas de estas instituciones son: Colegio Internacional de Esmirna, Colegio Anatolia de Marsovan, Colegio de Maestros de Sivas, Colegio Eufrates de Harput, Colegio Van de Van, Colegio Aintab de Aintab, Colegio de Turquía Central y Colegio de Mujeres de Marash, el Instituto Colegiado Americano para Niñas de Esmirna, el Colegio St. Paul de Tarsus, y además, tres veces ese número de escuelas superiores y academias, con escuelas intermedias y preparatorias, que se extienden por todo el país desde Esmirna hasta Persia, y desde el Mar Negro hasta Arabia. Y no hemos mencionado los hospitales modernos, que cubren el mismo territorio y traen sus bendiciones a todas las clases sociales, sin distinciones de raza o religión.

Los armenios, como pueblo, han dado una respuesta amplia a las necesidades de la educación moderna. La mayoría de los 25.000 estudiantes en las escuelas al Norte de Esmirna, han pertenecido a esta viril y tradicional raza. Miles han cursado estudios para graduados en los EE.UU. Se puede decir que América descubrió a los armenios e introdujo a la raza armenia al mundo occidental. Es por lo tanto lógico que en este momento de lucha mortal, América sea la primera en levantar su voz para protestar y sea la más dispuesta para ayudar a salvar a la nación de su aniquilación.

Hay unos 400 americanos ahora en Turquía conectados con varias comisiones e instituciones. Con estos, están asociados unas diez veces más, nativos capaces, en su mayoría armenios, griegos y sirios, todos comprometidos en conducir un trabajo destinado a llevar a ese país las bendiciones de la civilización cristiana. Estos americanos siguen en sus puestos, luchando cada día con su poder para aliviar y salvar a su gente. Aquellos que fueron obligados a regresar, lo han hecho de mala gana.

Hay indicios de una campaña concertada por parte de las autoridades en Turquía para eliminar todas las razas no-musulmanas. Sobre los armenios y los griegos se abaten los golpes ahora pero también hay intimaciones de que llegará pronto el turno de los judíos. En muchos lugares, las autoridades locales turcas han protestado enfáticamente. El gobernador de... fue llamado a Constantinopla para responder a los cargos de no haber obedecido órdenes de cumplir medidas drásticas del Gobierno central. Otros han dicho a los misioneros, que las medidas eran en gran parte crueles e innecesarias para el país, pero que finalmente se vieron forzados a obedecer. Gobernadores indulgentes y no deseosos de colaborar, fueron obligados a irse y transferidos, como uno en..., en cuyo lugar fue instalado el gobernador de... que ya había llevado a cabo con vigor las órdenes de masacre y de exterminación.

Hay muchas indicaciones de que los rusos en conjunto, no tienen sentimientos hostiles hacia los armenios y los griegos, y no llevarían a cabo estas drásticas medidas de exterminación de no verse forzados a hacerlo así. Algunos han declarado que las medidas van en contra del Mahometanismo, y son contrarias a las enseñanzas de su religión.

Hasta donde se puede asegurar, los dos oficiales turcos, Enver Pashá y Talaat Bey, son las fuentes de estas medidas. Hay muchos que creen (y entre estos una gran cantidad de misioneros, y también otros) que Enver Pashá está siendo pagado por el Kaiser, o, por lo menos, lo era hasta hace muy poco. Pocos, si los hay, creen que el plan de exterminación racial se originó en los Mahometanos, o es llevado a cabo por ellos por voluntad propia.

Un oficial alemán en el interior de Turquía relató a un americano que está ahora en los Estados Unidos (R.P....) que era el plan de gobierno en sus ataques, eliminar a los armenios como raza, sin dejar nada de ellos.

El gobernador de una de las más grandes e importantes provincias, en el interior, relató a un americano (R.P. ...) ahora en este país, que sus órdenes en Constantinopla eran no dejar ninguna población masculina de más de diez años. Estos niños podrían ser ubicados fácilmente en hogares musulmanes para su instrucción.

(continuará)

ASAMBLEA INTERINSTITUCIONAL ARMENIA
Jueves 28 de marzo, a las 21.00
Informe del **Dr. Roberto Malkassian** sobre las sesiones de la **Comisión de Derechos Humanos de la O.N.U.**
a las que asistió como **representante de la colectividad armenia de la Argentina**
U.C.A. DE MARASH — ARMENIA 1242. CAPITAL.

La Comisión de Relaciones Exteriores de la Cámara de Diputados dictaminó en favor del proyecto de reconocimiento del genocidio

Asamblea Interinstitucional Armenia

-COMUNICADO-

Informamos a nuestra comunidad que la petición formulada por esta Asamblea a la Comisión de Relaciones Exteriores de la Honorable Cámara de Diputados de la Nación referente al tema del genocidio, ha sido objeto de la siguiente tramitación:

1°) El 28 de diciembre de 1984 la solicitud, juntamente con siete anexos, fue receptada por el encargado de dicha Comisión, Don Hernán Herrero, tal como consta en el cargo puesto en la copia que obra en nuestro poder. La presentación, con igual tenor, efectuada al Honorable Senado de la Nación fue anunciada a través de la prensa (SARDARABAD, N° 322 del 16 de enero de 1985).

2°) El 13 de febrero del año en curso, el diputado nacional Federico Storani, presidente de la referida Comisión, convocó a esta Asamblea a su despacho de la calle Lima 115 en cuya oportunidad anunció que su bancada, a través de los integrantes en la Comisión de que se trata, había aprobado un proyecto de resolución en base a lo solicitado por esta Asamblea, dando lectura, seguidamente, al texto del mismo. Por la Asamblea, estuvieron presentes los Sres. Yeprad Bayramian, Haig Shahinian, Carlos Akian, Michel Karahanian, Eduardo Kozanlian y Gregorio Hairabedian.

3°) La mencionada Comisión aprobó el proyecto de resolución de los legisladores radicales, con fecha 6 de marzo de 1985.

4°) En consecuencia, resta su tratamiento por parte de la Honorable Cámara durante el presente período de Sesiones Extraordinarias.

5°) La A.I.A. ha presentado, además, sendas peticiones con igual contenido ante el Honorable Senado de la Nación y el Honorable Concejo Deliberante de la ciudad de Buenos Aires.

Buenos Aires, marzo de 1985

Esc. Gregorio Hairabedian
Presidente
de la Asamblea

Dr. Yeprad Bayramian
Presidente
de la Mesa Ejecutiva

DICTAMEN DE LA COMISION

Honorable Cámara:

La Comisión de Relaciones Exteriores y Culto ha considerado el proyecto de declaración de los señores diputados Storani y Becerra por el que se solicita al Poder Ejecutivo que instrumente e intensifique ante la Organización de las Naciones Unidas las medidas para obetener el reconocimiento internacional del genocidio cometido contra el pueblo armenio; y, por las razones expuestas en el Informe que se acompaña y las que dará el miembro informante, aconseja su aprobación.

Sala de la Comisión 6 de marzo de 1985

Federico Storani, Carlos Becerra, Ricardo Alagia, Ricardo Beri, José Bielicki, Ricardo Daud, Alberto Maglietti, Horacio Huarte, Lily D. de la Vega de Malvasio, Alberto Maglietti, Julio Ginzo, Raúl Rabanaque, Guillermo Sarquis, Guillermo Tello Rosas.

INFORME

Honorable Cámara:

La Comisión de Relaciones Exteriores y Culto, al considerar el proyecto de declaración de los señores diputados Storani y Becerra, referente al reconocimiento internacional del genocidio cometido contra el pueblo armenio, cree innecesario abundar en más detalles que los expuestos en los fundamentos, por lo que los hace suyos y así lo expresa.

Federico Storani

PROYECTO DE DECLARACION

La Cámara de Diputados de la Nación declara:

Que vería con agrado que el Poder Ejecutivo —a través del Ministerio de Relaciones Exteriores y Culto— instrumente e intensifique las medidas pertinentes ante la Organización de las Naciones Unidas para la obtención del reconocimiento internacional del genocidio cometido contra el pueblo armenio.

Carlos Armando Becerra **Federico Storani**

FUNDAMENTOS

Señor Presidente:

El 24 de abril de 1915 comenzaba a perpetrarse una de las masacres más horrendas que la humanidad ha conocido en lo que va de este siglo. Un millón y medio de armenios serían brutalmente eliminados con el objetivo claro y declarado de borrar de la faz de la tierra a esta laboriosa nación, democrática y cinco veces milenaria.

Nuestro presidente Hipólito Yrigoyen, en el decreto que lleva su firma del 20 de mayo de 1920, al reconocer a la República Armenia, señala en sus fundamentos como un hecho destacado la profunda convicción democrática de este valeroso pueblo. Con posterioridad, el presidente Juan Domingo Perón, en 1946, reconoció la conformación interestatal donde está inserta la República Armenia.

La Resolución 96 (I) del 11 de diciembre de 1946 de la Asamblea General de la Organización de las Naciones Unidas declara que el genocidio es un delito de derecho internacional contrario al espíritu y a los fines de las Naciones Unidas y que el mundo civilizado condena.

En 1948 se presenta ante los Estados miembros de la O.N.U. un proyecto de Convención para la Prevención y la Sanción del Delito de Genocidio. Esta Convención entró en vigor el 12 de enero de 1951 y nuestro país depositó su instrumento de ratificación el 31 de octubre de 1963, siendo en ese entonces el Doctor Arturo Illia Presidente de la Nación.

Entre los antecedentes a la Resolución 96 (I) de la Asamblea General de la O.N.U. y a la Convención de 1948, encontramos los principios del Estatuto Militar de Nuremberg y la secuela honda y dolorosa que sobre la humanidad habían dejado los crímenes cometidos por las hordas hitlerianas.

Por estas y otras razones, pero fundamentalmente por motivos de orden estrictamente humanitarios, es que consideramos necesario que la República Argentina reconozca ante las Naciones Unidas y los organismos correspondientes que de ella dependen el atroz genocidio del que fuera víctima el pueblo armenio en 1915.

Nuestro país es respetuoso del derecho sagrado de los pueblos a la existencia y a la vida. Por esta razón es que en nuestro suelo viven numerosos ciudadanos armenios y otros hijos y nietos de aquellos que perdieron su vida en los sucesos de 1915. La Nación Argentina, fiel a sus tradiciones democráticas y a su defensa inclaudicable de los derechos más elementales del ser humano, ha brindado generosa acogida a aquellas personas que huyeron de las guerras o las persecuciones buscando nuevos horizontes de paz y de progreso.

Queremos destacar en esta declaración que no nos anima ningún sentimiento de venganza o de revancha contra nadie en particular, simplemente consideramos que hechos de esta naturaleza deben ser denunciados para ser evitados en el futuro y que el reconocimiento del genocidio de 1915 contribuirá a hacer justicia y a cerrar una herida vergonzosa para la especie humana en este siglo XX del progreso, la democracia y el respeto a la integridad de los pueblos y las naciones.

Federico Storani

RIGAR'S
Camisería exclusiva

ACTO LITERARIO-MUSICAL

con motivo del primer aniversario del fallecimiento del poeta Hovhannés Shiraz

dedicado al 70° aniversario del "Primer Genocidio del Siglo XX"

Lunes 15 de abril a las 21.00 *Teatro Astral*

Շնորհիք Պատրիարք Դարձեալ Զրպարտութեան Ենթակայ

Ամէն անգամ որ Մեծ Եղեռնի ոգեկոչման պատրաստուի հայութիւնը Հայաստանի եւ արտասահմանի մէջ, եւ կամ բոլոր այն պարագաներուն երբ Թուրքիան եւ անոր Մեծ Ոճիրը կ'ելլեն Շնորհիք Պատրիարք Գալուստեանը բազմատեսակ ճնշումներու եւ հալածանքի կ'ենթարկուին:

Վերջին օրինակը կուտայ Թուրքիոյ ամենէն տարածուած օրաթերթերէն մին՝ «Միլլիյէթ» որ անհաւատալիօրէն վատ յարձակում մը կը շղթայազերծէ Պատրիարքին դէմ, «Զինկարծ հրատարակուող այդ յօդուածը միակ նպատակ մը ունի, զոր այսպէս կը բնութագրէ Շնորհիք Պատրիարք՝ իր պատասխան «Ճայտարարութեան» մէջ· «Հայոց Պատրիարքին ու հայ համայնքին դէմ (թուրք) հանրային կարծիքը գրգռել»:

Այստեղ կը փափաքինք մի քանի կարեւոր կէտեր ընդգծել:

«Միլլիյէթ»ի յօդուածը լոյս ընծայուեցաւ ճիշդ շաբաթ մը ետք այն յայտարարութենէն զոր Թուրքիոյ վարչապետ Թուրկուլ Օզալ կատարած էր «Կիւնէշ»ի խմբագիրներէն մէկուն, որով Հայկական Հարցին եւ Ցեղասպանութեան նկատմամբ Թուրքիոյ ցարդ բռնած պաշտօնական դիրքին վերաքննութիւնը կը պահանջէր: Սակայն Օզալ միաժամանակ կը յորդորէր թուրք լրագրողներն ու ձայնասփիւռի եւ պատկերասփիւռի խօսնակները՝ ահաբեկչական ահաբեկչութիւնը» բացատրութիւնները, որովհետեւ, կ'ըսէր ան թրքական կեղծատրութեամբ, «մեր երկրին հայ հայրենակիցները –որոնք ամէն են– նեղ դրութեան կը մատնուին»: Այս յորդորը լայն արձագանգ գտաւ թուրք թերթերուն եւ զանազան շրջանակներու մէջ, եւ թեր ու դէմ վէճեր կատարուեցան:

Կը թուի թէ «Միլլիյէթ»ի յօդուածը պատասխան մըն է Վարչապետ Օզալի տրուած, մանաւանդ եթէ նկատի ունենանք որ թերթին խմբագիրներէն մին է Մուհթազ Սոյսալ, ծանօթ հակահայ «պատմաբան»ը:

Ցօդուածին առանցքը կը կազմէ Մանուէլ Վրդ· Երկաթեան, որ, ինչպէս ընթերցողները կը յիշեն, Պոլսոյ Շշլիէէօյի օդակայանին մէջ ձերբակալուած էր 1980 Հոկտեմբերին, երբ մօտ տաս ուսանողներով կը պատրաստուէր Երուսաղէմ վերադառնալ: «Միլլիյէթ»ի յօդուածը սակայն կը պնդէ թէ Մանուէլ Վարդապետ ձերբակալուած էր Թուրքիոյ արեւելեան սահմաններուն վրայ, երբ, մինչեւ ակռաները զինուած, կը փորձէր Սուրիայէն Թուրքիա մտնել գաղտնաբար: Թերթը «շրջուն զինամթերանոց» կը կոչէ խեղճ երիտասարդ Վարդապետը, որուն վրայէն, ինչպէս կը ճշդէ Պատրիարքը, «զմեղի մը անգամ չէր գտնուած»:

Բայց «Միլլիյէթ» ճշմարտութեան եւ իրականութեան շա՛տ լաւ տեղեակ ըլլալով հանդերձ, գործ չունի անոնց հետ, որովհետեւ իր բացայայտ եւ անամօթ զրպարտութիւններով մէ՛կ նպատակ կը հետապնդէ· Թուրքիոյ մէջ բնակող եւ պաշտօնավարող հայ հոգեւորականները կասկածելի դարձնել յաչս կառավարութեան եւ թուրք հանրութեան, եւ ցոյց տալ թէ «հայկական ահաբեկչութիւնը»ը հո՛ն Թուրքիոյ մէջ նուս կը գործէ···:

Այս նպատակին հասնելու համար ամէն կարգի ստախօսութիւններ թխմուած են յիշեալ յօդուածին մէջ, ինչ որ ցոյց կուտայ թէ թերթին խմբագիրները ի՛նչ համարում ունին իրենց ընթերցողներու ուշիմութեան վրայ···: Եւ իրապես, պիտի չզարմանանք եթէ թուրք ընթերցողները իբրեւ բացարձակ ճշմարտութիւն ընդունին թերթին զրպարտութիւնները, եւ այս ձեւով հակահայ նոր տրամադրութիւն մը ստեղծուի Թուրքիոյ մէջ: Թուրքին սպասածը ի՞նչ է արդէն· առիթ մը ստեղծել՝ վայրագութեան բնածին ախորժակներուն պարբերաբար յագուրդ տալու:

Իր Ցայտարարութեան զուգադրաբար, Շնորհիք Պատրիարք ուրիշ, եւ մեզի համար շա՛տ նշանակալից թելադրութիւն մը կատարած է Փետրուար 19ին: «Միլլիյէթ»ի թղթակիցին հետ ունեցած իր տեսակցութեան ընթացքին, Պատրիարքը ըսած է· «Ցեղասպանութեան պընդումները ստուգելու համար պէտք է որ Թուրքիա անկողմնակալ պատմաբաններ բերէ եւ արխիւները անոնց բննել տայ: Խնդրոյ առարկայ դէպքերը՝ պատմական պատահարներ են: Պատմական դէպքերը՝ միմիայն չէզոք եւ անկողմնակալ պատմաբաններու կողմէ գրուելիք գրքերով մէջտեղ կը դրուին: Թող անկողմնակալ պատմաբաններ գան, արխիւները բանան, ճշմարտութիւնները իմացնեն ամբողջ աշխարհի, գիտական պրպտումներով երեւան հանեն ամէն բան»:

Տարօրինակ կերպով կորովի եւ յանդուգն առաջարկ մըն է կատարուածը, որովհետեւ ան տեղի կ'ունենայ երկրի մը մէջ՝ ուր Հայկական Ցեղասպանութեան շուրջ փաստաթուղթերու *անկողմնակալ եւ գիտական* ուսումնասիրութեան այսպիսի թելադրութիւն մը ծանր հետեւանքներ կրնայ ունենալ ենթակային համար:

Եթէ թուրքեր անկեղծօրէն կը հաւատան իրենց անմեղութեան, եթէ վստահօրէն կրնան պնդել թէ «դէպքեր» չեն պատահած 1915–1923 տարիներուն, այն ատեն պէտք պիտի չունենան նոյնիսկ «անկողմնակալ» պատմաբաններու դիմելու: Բաւ է որ բանան Օսմանեան նոյնիսկ «անկողմնակալ» պատմաբաններու դիմելու: Բաւ է որ բանան Օսմանեան արխիւները եւ կա՛մ անոնց պարունակութիւնը հրատարակեն, եւ կամ մատչելի դարձնեն ոչ-թուրք պատմաբաններու:

Այսպիսի բան մը կարելի՞ է ակնկալել թուրք պետութենէն: Թուրք մտաւորականներն ու պատմաբանները դրական այսպիսի քայլի մը նախաձեռնողը կրնա՞ը ըլլալ:

«ՊԱՅՔԱՐ»

«Միլլիյէթ» թերթի Պոլսոյ Հայոց անբասիր Պատրիարք Շնորհք Արքեպս· Գալուստեանի դէմ կատարած ստորին զրպարտութենէն ետք, երգիծանկարիչ Դանիէլ Հեճինեան կը մեկնաբանէ իրականութիւնը չլրջուած պատկերելու թրքական եղանակը:

Ռոպերթօ Մալխասեանը Վերադարձաւ Պուէնոս Այրէս

Ջորեքշաբթի, Մարտ 20–ին Պուէնոս Այրէս վերադարձաւ Հայկական Միջ–Միութենական Խորհուրդի բանագնաց Տօքթ· Ռոպերթօ Մալխասեանը:

Ինչպէս յանօթ է, Տօքթ· Մալխասեանը որպէս Խորհուրդի ներկայացուցիչ մասնակցեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Երկիրներու Ներկայացուցիչներու 41–րդ ժողովին, որ գումարուեցաւ Փետրուար 4–էն մինչեւ Մարտ 15, ժընեւի մէջ:

Տօքթ· Մալխասեան ապա Փարիզի մէջ ընդունուեցաւ Ն·Ս·Օ·Տ·Տ· Վազգէն Ա· Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ եւ ստացաւ Վեհափառ Հօր Օրհնութիւնները եւ յաջողութեան մաղթանքները, մեր Ցեղասպանութիւնը ճանչցընելու դժուարին գործին մէջ: Տօքթ· Մալխասեան Փարիզի մէջ մամլոյ ասուլիս մը տուաւ տեղւոյն հայկական թերթերուն եւ Միութիւններու ներկայացուցիչներուն:

Հինգշաբթի, Մարտ 28–ին, Մարաշ Ցան մէջ Տօքթ· Մալխասեան հանրութեան մանրամասն տեղեկութիւններ պիտի տայ իր աշխատանքներուն մասին:

Արժանթինի Մէջ Հաստատամգրուած Թուրք Դեսպանը Մահացաւ

Շաբաթ Մարտ 23–ի առաւօտեան, տեղւոյն լրագրական գործակալութիւնները հաղորդեցին մահը Արժանթինի Թուրք դեսպան՝ Փերթեւ Սուպասի–ի, որ պատահած է սիրտի տագնապի հետեւանքով, 62 տարեկան հասակին:

Փերթեւ Սուպասին չուրջ մէկ ու կէս տարիներէ ի վեր կը վարէր այս պաշտօնը, եւ վերջերս յծուած էր հակահայկական քարոզչութեան մը, Եղեռնի 70–րդ Տարելիցին առթիւ:

Գրական – Երաժշտական Հանդիսութիւն

Յովհաննէս Շիրազի

Մահուան Առաջին Տարելիցին Առթիւ

Նուիրուած

Եղեռնի 70–րդ Տարելիցին

Տեղի Կ'ունենայ Երկուշաբթի Ապրիլ 15–ին
ԱՍԹՐԱ՝ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

Ժամը 21–ին
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

70 – ՐԴ Ապրիլին Ընդառաջ

Գրեց՝ Յակոբ Միքայէլեան

Մեծ Եղեռնի ցիսնամեակը արտասովոր երեւոյթ մը եղաւ ոչ միայն Մայր Հայրենիքի մէջ, ուր պատահածը պատմութեան մէջ մնաց, այլ նաեւ Սփիւռքի տարածքին, որովհետեւ յոբելենական այս կ'օր թիւը յուշեց բոլորին որ, եթէ նոյն Աստծոյն տարբեր ձեւերով կ'աղօթեն մարդիկ, նոյն մեռելներուն համար ճիշդ չէ տարբեր ձեւերով սգալ եւ նոյն վերականգնած ազգին ներփողը սխալ է տարբեր ձեւերով հիւսել: Ու այդ կ'օր թիւը հրահանգեց, որ նիզակները վար դրուին, որպէսզի ձեռքերը ազատ ըլլան իրար բռնելու համար:

Ձեմ ըսեր որ բոլոր-բոլորը լսեցին կամ ականջ դրին այդ կոչին, սակայն աշխարհի վրայ չատ մը տեղեր մարդիկ գիտցան մտի՛կ ընել ու գործադրել զայն:

Ես կը յիշեմ, Հալէպի մէջ, գոնէ օրուան մը համար, զգացինք որ Մէկ ենք մենք, որ մէկ եղած է մեր ջարդարարը, որ մէկ եղած է մեր գաղթի ճամբան: Մէկ եղած է այն բազուկը, որ թիթեղ-թիթեղի կարկատելով տուն ու դպրոց կառուցած է, եկեղեցի ու արհեստանոց կանգնած է, ակումբ ու տպարան բացած է: Մէկ եղած է նաեւ մեր կամքին ուժը՝ վերապրելու եւ հիւսանիներէն մինչեւ աստղադիտարան բարձրանալով վերյառնելո՛ւ:

Զգացինք այս բոլորը, խանդավառուեցանք ու մաղթեցինք որ այսպէ՛ս մնայ, այսպէ՛ս չարունակուի, եթէ ոչ յաջորդող տարիներուն, գոնէ յաջորդող Ապրիլներուն:

Սակայն այդ հոգեճաչէն ետք, ամէն մարդ վերադարձաւ իր տունը եւ իւրաքանչիւրը սկսաւ իր ապուրը, իր դիւցած ձեւով պատրաստել:

Անցած տարիները:

Եղեռնի 60ամեակին դարձեալ մարդիկ մտածեցին, որ պատշաճ էր կրկին վերադառնալ ցիսնամեակի օրերուն: Եղաւ այդ մէկը, սակայն ոչ նախորդին տարողութեամբ ու չուքով:

Անցնող տարիներէն փորձառած, գիտէինք որ յաջորդող տարիներն ալ պիտի ըլլայինոյնը: Այդպէս ալ եղան, բացի աննշան չեղումէ մը, եւ մենք անհամբեր սպասեցինք 70ամեակին, որ չուշացաւ:

Հիմա, մեր 70րդ Ապրիլի նախօրեակին, մենք, ցիսնամեակի պատանիներս, հարց կուտանք. ի՞նչ կամ ո՞ր ձեւով պիտի դիմաւորենք այս տարելիցը: Ցիսնամեակի՞ն ձեւով, Վաթսունամեակի՞ն, թէ՞ միջանկեալ տարիներուն պէս:

Անպայման սպասելո՞ւ ենք որ թիւը 75 կամ 100 ըլլայ:

Վերջ ի վերջոյ, ի՞նչ նըշանակութիւն ունին կ'ըսէ թիւերը:

Եթէ միտքերը առողջ են, խեղճերը մաքուր ու կիրքերը արձակուրդի մէջ, կարելի է ամէն տարի կ'օր թիւի ոգիով մտածենալ Ապրիլի մեծ խորհուրդին:

«Համագործակցութիւն» կոչուած սա չարչարուած բառը կարելի չէ մերկացնել իր մգլոտան, գոյնզգոյն զգեստներէն ու իր հարազատ, մաքուր իսկութեանը մէջ տեսնել զինք:

Վստահ եմ բոլորն ալ համաձայն պիտի ըլլան համագործակցելու, սակայն իւրաքանչիւրը «միայն ԹԷ» մը պիտի ունենայ անպայման լեզուին ծայրը: Սակայն մէկն ու մէկը «bu» պիտի ըսէ՝ «պոս»-ովթիւնը իրեն վերապահելու միտումով:

Երբ Թուրքը իր Սեւ թաթով գարկաւ, երբեք խորութիւն չգտա՛ւ: Այդ օրերուն «պոս»ը ինք էր: Իսկ այսօր, այդ հարւածէն տուժած հայութիւնը, եղեռնի տարելից մը ոգեկոչելու համար, եթէ փորձէ «bu»ու «դուն»ի պայմաններով սակարկութեան մտնել, ոչ միայն օրհասելի կը դառնայ մեր դաւիճին աչքին, այլեւ՝ առելի կը դառնայ մեր բիւրաւոր նահատակներուն աչքին:

Վերջ ի վերջոյ մտածեցէք, թէ ի՞նչ կրնայ պատահիլ, եթէ Ապրիլ 24ի օրը մեր նահատակներէն մէկն ու մէկը ոտքի կանգնի ու մեր երեսն ի վար պոռայ:

–Կա՛մ յիւատակնիս յարգեցէք մարդու պէս, առանց իրար հրմշտկելու, առանց մեզ քաշկռտելու, կամ ալ անցէ՛ք գացէք ու մեզ հանգիստ ձգեցէք. ո՛չ պէտք ունինք ձեր սակարանային արցունքներուն, ոչ ալ ձեր գուշաւոր սգահանդէսներուն:

Եթէ այդպիսի հրաչք մը պատահի, եւ կրնա՛յ պատահիլ, – երիտասարդութիւնը վկայ, – այն ատեն արժէ՛ որ իրենց փոխարէն մե՛նք հոդ մտնենք:

Սուգի եւ Ուխտի 70–ամեակը

Սուգի օր է, ահաւոր եղեռնին վերապրածներուն համար: Սուգին լեղի տառապանքով, զարհուրելի կրուստին բզխտող վշտով ներէն կը կոտտայ հայ ժողովուրդին էութիւնը: Եւ տըրտմութեան արցունքներ կիյնան, եւ յիշատակի ծաղկեպսակներ կը դրուին հեռաւոր, նահատակ մարմիններու յուշարձաններուն վրայ: Որովհետեւ անոնք չունեցան գերեզմանատուն, դամբանական կամ շիրմաքար: Որովհետեւ անոնց հոգեվարքի շունչերը մարեցան եւ բզկտուած ոսկորները ճերմկեցան եւ հրկիզուած աճիւնները փշրիացան՝ իրենց հայրենի ծըննդավայրէն միջեւ արաբական արիւնախանձ անապատները տարածուող լեռներուն ու հովիտներուն վրայ, կամ ձորերուն ու կիրճերուն մէջ, կամ ապառաժներէն ու գետերէն դարվար:

Որովհետեւ թրքական իշխանութեան սադրած ալեքումի եւ սպանդի դժոխային ուրվականը, այդ Ապրիլին, ենդեռնական վայրագութեամբ պայթեցաւ արեւմտահայ ժողովուրդին վրայ: Դարնանային բողբոջումով կեանքը կը վերածնէր ճմեռուան գերեզմանէն, պարտէզներ կը պտղաւորէին եւ ծաղիկներ իրենց գոյները կը սփռէին հայոց պատմական բայց գերեվար ոստաններուն եւ հնամեայ գիւղերուն ու հիւղերուն շուրջ:

Սակայն թուրքը շղթայազերծեց իր հրձիկ խարոյկներուն ու արիւնարբու եաթաղաններուն պատուհանը եւ մահ ու կործանում, հոգեվարք ու թշուառութիւն, աճսոր ու հեծծումնէ կուտակեց կենսալի, ստեղծարար ու բարի ցեղի մը հազարամեայ բաղաճներուն մէջ եւ նուիրական օճախներուն բոլորտիքը:

Մարդկային ընկերութիւնը երբեք չեր տեսած, չեր արձանագրած այդպիսի գեհենային ոճիր: Որ տիրակալ պետութիւնը ասուճարիւն գազանութեամբ յղանայ ու ծրագրէ հրպատակ, աշխատասէր ազգի մը ամբողջական ոչնչացումը եւ գործադրէ այդ հրեշային նախձիրը հուրով ու սուրով եւ բորենիական գիշատիչ ախորժակով:

Թուրքը, իբրեւ իշխանութիւն ու ժողովուրդ, իր գոյութեան ամօթալի դարերու ընթացքին՝ գիտութեան լոյսի ցոլք մը անգամ կամ ստեղծագործ բարիքի փշրանք մը, կամ քմահաճ ու ոգեկան գեղեցկութեան նշոյլ մը իսկ չէ կրցած ընծայել քաղաքակիրթ երկիրներու կերտած հոյակապ հարստութեան: Բայց ան, իր յափշտակից մուլուցքին ու արիւնազանգ գարշապարին ետ՝ հալածանքի ու շղթայ, թալան ու կոտորած տարեր է միայն օսմանեան կայսրութեան նուաճած բոլոր ազգերուն ու ցեղերուն:

Քանդումի, կողոպուտի ու ջարդի այդ անսանձ կատաղութիւնը էր, որ բռնկեցաւ 1915 Ապրիլին: Երբ ընդհանուր պատերազմը կլաներ էր դաշնակից երկիրները օրհասական գոյամարտի մը մէջ, եւ թրքական իշխանութիւնը արձակ պատեհութիւնը գտաւ իրագործելու ցեղասպանական իր ոճրապարտ ծրագիրը: Կալանաւոր անպաշտպան զոհը՝ հայ ժողովուրդը՝ գինաթափ, տարտղնուած եւ առանձին կը մնայ դահիճին սպառազէն ճիրաններու տակ:

Եւ թուրքը՝ պետութիւն, բանակ ու ամբոխ, լծուեցաւ հայաջինջ նախձիրին: Երիտասարդ ու չափահաս մարդիկ առնուեցան գինուորական ծառայութեան մէջ խափանելու համար ինքնապաշտպանութեան ամէն փորձ: Եւ կիներ, մանուկներ ու ծերունիներ, իրենց տուներէն խըզուած, խարազանով ու սուիններով քշուեցան դէպի տարագրութեան մահաշուէ ճամբաներ ու գերեզման-անապատներ:

Եւ իրենց հայրենի երկիրներուն տակ, բակերուն մէջ, գետերու յորձանքներուն մէջ եւ աֆսորի կարաւանային ճամբուն հետ՝ մէկ ու կէս միլիոն անմեղ հայ մարդիկ, կիներ ու մանուկներ մորթուեցան հրկիզուեցան ու խեղդուեցան, եղերական ճանապարհներուն կոտրեցան:

Ի՞նչ արիւնածարաւ հրեշ էր թուրքիը, որ այդ կրցաւ Զօհրապի եւ Վարուժանի, Սիամանթոյի ու Սիամանթոյի, Թլկատինցիի ու Զօրեանի, Պոյաճեանի ու Տարաւարեանի եւ այլոնի ուրիշ լուսնեղէն դէմքերու գիրպաշտ ոգիները խորտակել, գատապարտել սիրտերը թզկտել եւ հաճեցարեղ գանկերը փշրել քարերով…: Զարհուրելի այդ նախձիրին եւ անոր ետեւ կորուստներուն առջեւ որ դաժան յանխախձով մը կը ծանրանայ, կը կարդայ հայ ժողովուրդի էութեան մէջ, ամէն Ապրիլ 24-ին:

Սակայն նաեւ ուխտի բերական մըն է ան, որովհետեւ անոնց բոլորին եղերական նահատակութեան միակ պատճառը՝ իրենց հայութիւնն էր իրենց առհասական ժառանգորդի իրաւունքին էր Հայտանի հողին ու բարի՛ն. անոնց ուխտը հետեւ, համատարած ոչնչութեան մէջ անգամ, թուրք դահիճին դէմ ինքնապաշտպանութեան դիւցազնական կռիւներով կանգնող հայ մարդիկը, վաճէն մինչեւ Նոեմոսեան Շապին Գարահիսարէն մինչեւ Մուստաղ ու Կիլիկիա անկիւններ բաջութեամբ մարտնչեցան՝ իրաւատէրն ու ժառանգութիւնը՝ հայութիւն ու հայրենիքի փրկելու համար:

(Շար.ը 15րդ էջ)

Օրլիի օդակայանին մէջ 15 Յուլիս 1983ին պայթած ռումբին որպէս հեղինակ, երեք հայ երիտասարդներ դատապարտուեցան տարբեր աստիճանի բանտարկութեան ֆրանսական դատարանին կողմէ:

Վարուժան կարպիճեան ցըկեանս բանտարկութեան դատապարտուեցաւ, իսկ Սոնէր Նայիր՝ 15 եւ Օհաննէս Սեմերճի՝ տասը տարուան բանտարկութեան:

Առաջին անգամ ըլլալով Թուրք կառավարութիւնը յատգոհ է ֆրանսական արդարադատութենէն եւ իր ցնծութիւնը կը յայտնէ…:

Նկարին մէջ՝ դատաւորութենէն տեսարան մը:

Թլկատինցու Գեղարուեստական Արձակը (Եղեռնի 70–ամեակին Առթիւ)

Գրեց՝ Խաչիկ Ամիրեան

«Սարտարապատ» յաջորդաբար պիտի հրատարակէ Եղեռնի Զոհերէն Թլկատինցիի գրականութեան մասին գըրուած շահեկան ուսումնասիրութիւն մը, գրուած հայրենի գրականագէտ Խաչիկ Ամիրեանի կողմէ:



Թլկատինցու գրական տաղանդը բեղմնաւորուեց եւ պողպատեցաւ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ արեւմտահայ գրական անդաստանում մի կողմից ռոմանթիք հոսանքը իր վերջալոյսն էր ապրում, իսկ միւս կողմից իրապաշտական շարժումը իր վերելքի հունի մէջ էր մտնում, գաւառի առաջաւոր ներկայացուցիչները խորապէս մըտահոգուած էին Հայաստանի բազում գյուղաքաղաքներում ու գիւղերում ապրող հայ գիւղացու հասարակական–քաղաքական տագնապալի դրութեամբ, եւ ազգի լուսաւորութեան ու զարթօնքին համար գիմում էին ժողովրդական քանահիւսութեանը, զրոյցներին, առակներին՝ հոգեւոր հարստութիւններին:

Դեռ 1850–ական թթ. Խ. Աբովեանը, «Վերք»–ում եւ այլ գործերում, ազգային ազատագրական պայքարի, ազգային միասնութեան թեմաների կողքին մշակել էր նաեւ «գիւղի» թեման՝ իր հասարակական եւ կենցաղային կողմերով, մտահոգիչ առօրեայով, պարսկական տիրապետութեան տակ ճնշուած հայ գիւղացու դժնդակ ապրելակերպի պայմաններով:

1870–ական թթ., իրենց ըստեղծագործութիւններում, նոյն թեման արտացոլել եւ մշակել են Պ. Պռօշեանը, Ղ. Աղայեանը, յատկապէս արեւելահայ գիւղագիրները (Ա. Ագապեան, Յ. Ճուղուրեան, Ա. Ադելեան, Ս. Մելիք Շահնազարեանց, Ջալախեցի եւ այլք)

1880–ական թթ. արեւելահայ եւ արեւմտահայ առաջաւոր մի քանի գրողների ստեղծագործութիւններում հայ գիւղացու օրհասական կացութիւնը հրատապ, օրակարգային հարց էր: Գիւղից սերած, գիւղին մերուած, հայ գիւղացու կեանքի բոլոր մանրամասնութիւններին ծանօթ ու գիտակ լուսաւոր մտքերը տեսնում եւ համատեղ ապրում էին նրա տքնջան առօրեան, անմարդկային ապրելակերպը, գիւղաշխարհում առաւել սուր էին զգացւում տգիտութեան եւ յետամնացութեան չարիքները, այդ թւում որոշ կղերականների կեղեքումն ու չահագործումը, եւ իհարկէ ամենից առաջ պարսկական, ցարական եւ մանաւանդ սուլթանական իշխանութիւնների քաղաքական ահաւոր ճնշումն ու հալածանքները, որոնք նպատակադրուած էին ուծացնել եւ ձուլել հայ ժողովրդին:

Արեւմտեան Հայաստանում, Թրքական բռնակալութեան վայրագ սմբակների եւ բիրտ ճոկանների տակ հեծող հայ ժողովուրդը, 19–րդ դարի երկրորդ կէսից, յատկապէս 1877թ. Ռուս–թուրքական պատերազմից յետոյ ապրում էր ազգային վերածնութեան նորածագ յոյսերի մի ժամանակաշրջան: Իսկ դրա հետ, Օսմանեան բռնապետութեան խիստ դժնի հակագրեցութիւնը, որպէս Դամոկլեան սուր, տեղնուտեղը խողխողում էր վերածնութեան ամէն մի չունչ, զազաղելու եւ թաղելու ամէն մի յոյսի նշոյլ (որը, ինչպէս ծանօթ է հանուր աշխարհի, յանգաւ 1915 թրուածական եղերական ցեղասպանութեան):

Ցայտնի է, որ 19–րդ դարի 30–ական թուականներից եւ նրա կէսից յետոյ, քաղաքական, պատմական եւ տրնտեսական նոր իրադարձութիւնների բովում (պալքանեան ժողովուրդների ազատագրութիւն, ցարական թափանցում՝ Անդրկովկասում եւ Արեւելեան Հայաստանում, աւատական կացութեանէն քայքայում ու պուրժուական յղութնգների տարածում Օսմանեան կայսրութեան ընդարձակ տերիտորիայում եւ այլուր), հայ ժողովուրդը եւս ապրում էր նոր ազգային եւ մշակութային զարթօնք, վերընթաց շարժումով: Հայ ժողովուրդը յոռացնել էր դարերի փորձութիւններին եւ այժմ էլ հսկայական ճիգեր էր վատնում ապացուցելու իր յարատեւ կամքն ու վճռակամութիւնը: Իրար յետեւից բացւում էին զարդացներ Հայաստան բնաշխարհում եւ հայահոծ քաղաք–գաղութներում, հիմնւում էին լուսաւորութեան օջախներ, կազմակերպւում՝ մշակութային եւ հասարակական միութիւններ: Տպարանը, մամուլն ու լրագրերը եւ պարբերականները լուսաւորում էին հայ զանգուածներին եւ թափանցում մինչեւ գիւղերը: Գիւղը, գաւառը սթափւում էր: Անդրադառնում իր մղձաւանջային իրականութեան: Տեսնում իր հոգսերն ու վշտերը, իր օրհասական տուայտանքը, ճանաչում ինքզինքն:

Արեւմտահայութեան գաւառական եւ գիւղական զարթօնքի առաջին ատհաբը, առաջին կանչերը գալիս էին ուղարտածին Հնտէնի Վասպուրականից, որը ծնեց իր Հայոց Հայրիկը՝ Մկրտիչ Խրիմեանը: Նա քալ իմանալով խօսքի սահմանափակութիւնը եւ գրի, գրչի ու մամուլի չզօր դերը, անձնդիր կերպով իրեն նուիրեց հայ գրականութեան՝ դառնալով նրա ջահակիրներից մէկը: 1857 թ., Վանում հիմնեց առաջին տպարանը եւ սկսեց հրատարակել «Արծուի Վասպուրականի» ամսագիրը: Այդ ամսագրում եւ յետագայում լոյս ընծայած իր գրքերում («Կուժ մի ջուր առ իմ այրած Հայրենիք», «Հայգոյժ», «Վանգոյժ», «Պապիկ ու Թոռնիկ»), առաւելապէս զրուցատրական եղանակով, իր հայրենասէր հոգու եղերափառները, աւելի ճիշդ բացեց հայ գիւղացուն, չինականին, մշակին, արհեստագործին՝ նրան ներշնչելով հայրենասիրութիւն, հողասիրութիւն, ազգային միասնականութեան ոգի: Ամրապնդեց ժողովրդի հաւատը ապագայի նկատմամբ: Մկրտիչ Խրիմեանը, իր բանաւոր ասուլիսներին եւ գրուցատրական գրականութեանը հաճեմում էր առակներ, հայկական բանահիւսութիւնից վերցնում առածներ եւ ժողովրդական ասացուածքներ, երգեր, նրանցով մատչելի, հասկանալի լինելու եւ լուսաւորելու համար իր ժողովրդին: Նրա մտահոգութեան խարիսխը հայ գիւղն էր՝ չինականը, չինականի կրթութիւնն ու լուսաւորութիւնը, բարեկեցութիւնը եւ հայ ժողովրդի ապատագրութիւնը բռնակալներից:

Խրիմեան Հայրիկի հիմնած Վարագի Ժառանգաւորաց վարժարանի անդրանիկ սաներից էր մի այլ հոգեւորական՝ Գարեգին Սրուանձտեանցը, որը եղաւ նրա աջ բազուկը, գործակիցը եւ գաղափարական գինակիցը: Սրբուանձտեանցը, հետապնդումների եւ հալածանքների ենթակայ իր եզակի հասարակական գործունէութեանը զուգընթաց, եղաւ ոչ միայն հայ գրի եւ մշակոյթի երախտաւորներից մէկը, այլեւ 70–80–ական թուականներին իր լոյս ընծայած «Գրոց–բրոց», «Հընոց–Նորոց», «Մանանայ», «Համով–հոտով» հատորներով «նոր որակ» բերեց «գրական–հասարական մի նոր հոսանքի կամ ուղղութեան», որը «այսպէս կոչուած գաւառական գրականութեան առաջացումն էր կամ գաւառի մուտքը գրականութեան մէջ, որը նշանաւորւում էր գիւղացիական–նարոդնիկական իր նորոգ հովերով ու գաղափարներով» («Հայ նոր գրականութեան պատմութիւն», Ա. Ղանալանեան, հ. 3, 1964, Երեւան, էջ 556–7): Մեր օրերին, նա մինչեւ անգամ նկատուում է «արեւմտահայոց գաւառական գրականութեան հիմնադիրը» (Է. Կոնստանդեան, «Գարե-

(ՇԱՐ.ը 15–րդ էջ)



Այս իւղանկարը կը պատկանի արուեստագէտ Սանուէլ Լուսեանին, որ կը մասնակցի Ուաշինկթընի Եղեռնի 70–րդ տարելիցին առթիւ կազմակերպուած ցուցահանդէսին:

Colegio Mekhitarista

La Dirección del Colegio Mekhitarista tiene el agrado de invitarlo a la exposición de obras correspondiente al "primer Salón 24 de abril", organizada en adhesión a los actos centrales de conmemoración del 70 aniversario del genocidio perpetrado contra el pueblo armenio, el 24 de abril de 1915.

Inauguración: 27 de marzo de 1985 - 19:00 hs.
Clausura: 7 de abril de 1985 - 19:00 hs.
Sala "Centro Islas Malvinas" - Florida 753 - Buenos Aires
Lunes a sábado de 10:00 a 21:00 hs. - Domingo de 16:00 a 21:00 hs.

Բացում

Հայկական Ցեղասպանութեան 70–ամեակի Նուիրուած Մխիթարեան Վարժարանի կազմակերպած ցուցահանդէսին:

Զորեքշաբթի 27 Մարտին – ժամը 10:00–ին

Տասնամեակ Մը Առաջ

(Եղեռնի 60-ամեակին Առթիւ Պէյրութի «Զարթօնք» Օրաթերթի Յունուար 1, 1975-ի Խմբագրականէն Հատուած Մը)

...Մեր ժողովուրդի 35 դարերու կեանքին մէջ՝ քսաներորդ դարը կարելի է նկատել ամէնէն բախտորոշներէն մէկը, – Ք. ա. 2րդ դարու, Ք.Ե. 5րդ. դարու, 11րդ դարու, 13րդ դարու եւ 16րդ դարու կողքին, – եթէ ոչ ամէնէ բախտորոշը, ամէնէն ահաւորը, ամէնէն ողբերգականը: Արդարեւ, քսաներորդ այս «լուսաւոր» դարու առաջին քառորդին է, որ Թուրքը կազմակերպեց մեր ժամանակներու մեծագոյն ցեղասպանութիւնը, – տեղահանելով, տարագրելով ու բնաջնջելով՝ սահմռկեցուցիչ ամենավշրագ միջոցներով՝ աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ հայեր (համեմատաբար չուրջ կէս միլիոն զոհերէն եւրոպ), քանդելով ու փճացնելով հայկական հազարամեայ մշակութային օճախներ ու կոթողներ, ամայացնելով ամբողջ Արեւմտահայաստանը եւ Հայկական Կիլիկիան, եւ կողոպտելով անհաշիւ հայկական հարստութիւն: Եւ ի վերայ այսօր ամենայնի, անկիւա գերագոյն ճիգ ըրաւ արեւելահայութիւնը եւս ենթարկելու նոյն դժոխային բախտին, – եւ ձախողեցաւ բարեբախտաբար, – ապա փորձեց Լոգանի 1923 Յուլիս 24ի դաշինքով վերջնականապէս գերեզմանել Հայկական Դատը, աչխարհին յայտարարելով թէ այլեւս գոյութիւն չունէր հայկական հողային հարց, եւ թէ ինք ի սպուռ սեփականուցած ու իւրացուցած էր Հայաստանի եօթը տասերորդը՝ Վանով ու Խարբերդով, Տիգրանակերտով ու Կարինով, Կարսով ու Երզնկայով:

Ճիշդ է, Թուրքը գրեթէ մահացու հարուած տուաւ մեր ժողովուրդին, սակայն մեծ ջարդարար ու ոճնագիտ Ահմէտ Թալեաթի չնաչխ հաստատումը թէ՝ «Հայկական հարց գոյութիւն չունի, վասընդի հայ չկայ», ինքնին հաստատապէս ժխտուեցաւ Հայաստանի Հանրապետութեան եւ ապա Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան գոյութեամբ ու յարաճուն բարգաւաճումով եւ հզօրացումով: Արդարեւ, Հայաստանի միայն մէկ տասներորդին վրայ կազմակերպուած հայոց ազգային պետութիւնը ոչ միայն Թրքական եաթաղանի փչրումը կը նչանակէ, այլեւ այսօր ապացոյց կը հանդիսանայ, որ վերածնած փոքր Հայաստանի գիտութեան, մչակոյթի ու ճարտարարուեստի մէջ տասը անգամ աւելի առաջ անցած է փտած Օսմանեան կայսրութեան վիճակէն՝ այսպէս կոչուած Թիւրքիոյ Ճումհուրիյէթին:

Եւ ոչ միայն այդքան: Մեծ Եղեռնի վաթսունամեակին, այս տարի, ամբողջ հայ ժողովուրդը, անկախ ցնթաց երկիւղածութեամբ խոնարհէկ զատ մեր նահատակներու, մարտիրոսներու եւ հերոսներու յիչատակին առջեւ, անխորտակելի հաւատքով պիտի հետապնդէ իր հողային սրբազան դատը, – Մայր Հայրենիքի մէջ տարբեր մեթոտներով, Հայ Սփիւռքի մէջ՝ բոլորովին տարբեր: Մայր հայրենիքի մէջ մեր եղբայրներն ու քոյրերը ապահովաբար պիտի բաժնեն մեր զգացումներն ու ապրումները, բայց պիտի ըլլան աւելի զուսպ, հեռու պիտի մնան ամբոխավարական արտայայտութիւններէ, պիտի բաժնեն պետական մըտահոգութիւնները, բայց իրենց կամքն ու պահանջքը պիտի արտայայտեն գրական գործերով, չինարարութեամբ ու գիտական նուաճումներով, վառ պահելով նահատակներու ոգին ու մեծ տեսիլքը, – Միճեռնակաբերդի յուշարձանով եւ Սարտարապատի կոթողով, ու գրականութեամբ եւ այլ գեղարուեստներով: Եւ ամէնէն պերճախօսը՝ աննախընթաց խանդավառութեամբ տօնելով Հայկական Հանրապետութեան փառապանծ 55ամեակը, անսահման հրճուանքով տօնելով կեանքին յաղթանակը թրքական խաւարին վրայ, չինարար բազուկին յաղթանակը եաթաղան բարձրացնող բազուկին վրայ, եւ յառաջդիմութեան յաղթանակը ատոր յետադիմութեան վրայ:

Մենք, սփիւռքահայերս, լիովին պիտի բաժնենք հայրենաբնակ մեր եղբայրներուն ու քոյրերուն ուրախութիւնն ու հպարտութիւնը, – քանի Հայկական Հանրապետութիւնը «ամենայն հայոց հայրենիք» է անտարակոյս, – սակայն նոյն ատեն այլ մեթոտներով եւ միջոցներով պիտի հետապնդենք մեր սրբազան դատը: Մենք, սփիւռքահայերս, մեծ Եղեռնի վաթսունամեակին, զարձած մէկ սիրտ ու մէկ հոգի, զարձած քաղաքական ու բարոյական բռունցք եւ զէնք, անվհատ պիտի պահանջենք Թուրքին կողմէ վատաբար բռնագրաւուած մեր հողերուն ազատագրումը, անոնց վերադարձը իրենց իսկական տիրոջ՝ հայ ժողովուրդին: Մենք պիտի չդհանանք ոգեկոչումի ձեռնարկներով, սգահանդէսներով, աղօթքով, հոգեհանգստեան պաշտօններով եւ գրականութեամբ: Այլ պիտի կազմակերպուինք, ու մեր վտիտ միջոցները ի մի բերելով, պիտի կազմակերպենք ցոյցեր, միթինկներ, արշաւներ, պիտի յանձնենք յուշագիրներ, պիտի ներկայացնենք գրքոյկներ ու հատորներ, – պիտի բողոքենք ու պահանջենք բոլոր լեզուներով, ամէն երկրի մէջ, ուր որ հայ գաղութ մը կայ կամ կան նոյնիսկ քանի մը հայ ընտանիքներ:

Անմիջականօրէն գրական արդիւնքներ պիտի տաՏ այս բոլորը: Շատ հաւանաբար՝ ոչ: Բայց անոնք անգամ մը եւս, – եւ յիսնամեակի ճիգերէն աւելի, – ցոյց պիտի տան, թէ երկինք – երկիր իրար անցնին, այս ժողովուրդը պիտի չհրաժարի իր արդար իրաւունքներէն, պիտի չյուսահատի երբեք, գիջում պիտի չընէ, եւ վայրկեան մ'իսկ պիտի չսարսափի Գորշ Գայլէն՝ որքան ալ անիկա ինքզինք հրզօր զգայ չնորհիւ իր ստացած միլիարդներուն եւ չնորհիւ իր վայելած գինուորական ու քաղաքական պաշտպանութեան: Եւ մեր նոր սերունդը պիտի կոփուի ու զառնայ նոր Մասունցի Դաւիթ, որ ազատութեան եւ արդարութեան եւ հրաւունքի յաւերժական ախոյեանն է: Մասունցի Դաւիթ՝ ընդդէմ գիշատիչ Գորշ Գայլի...:

Այս քսաներորդ դարու առաջին քառորդը տեսաւ հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը եւ արեւմտահայութեան հողային դատին գերեզմանումը: Այս նոյն դարուն վերջին քառորդը պէտք է անպայման դառնայ ցեղասպանի դատապարտութեան եւ հատուցումի ժամանակաշրջանը: Այսօր իսկ կը սկսի այդ վերջին քառորդ դարը: Եւ ուստի, այսօր իսկ նոր թափ կ'առնէ Հայութեան աննահանջ պայքարը՝ յանուն իր հողերու ազատագրութեան, յանուն արդարութեան, յանուն ազատութեան եւ յանուն Ամրողջական Հայաստանի:

ԳԵՐՍԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՈՒԱՇԻՆԿԹՐԷՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետական Շքանշան Ճորճ Տէօքմէճեանին

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու Առաջնորդներու նախաձեռնութեամբ, անցեալ Փետրուարին Ուաշինկթընի մէջ բացումը կատարուեցաւ Եղեռնի 70-րդ տարելիցին նուիրուած ճեռնարկներուն: Բացման ճեռնարկին կը նախագահէր Գալիֆորնիոյ հայազգի կառավարիչ Ճորճ Տէօմէճեանը: Այդ առթիւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը կառավարիչ Տէօմէճեանին սրբատառ կոնդակով մը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ա. կարգի շքանշան մը շնորհած էր:

Հիւսիսային Ամերիկայի Հայոց Առաջնորդ Թորգոմ Արք. Մանուկեան Ս. Գրիգոր Լուսաւորիչի Հայրապետական շքանշանը կ'ամրացնէ կառավարիչ Ճորճ Տէօքմէճեանի կուրծքին. ձախէն՝ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Վահէ Արք. Ծոլաքեան:

Աղօթք՝ Հայուն Համար

«Հանրային կարգ մը դեկավար տարրեր կը խօսին առաջնորդութեան պահանջած զոհողութիւններուն եւ բեռին մասին, ոչինչ սակայն կարելի է բաղդատել այն զոհողութիւններուն, զորս մեր ծնողները կրեցին բրքական ջարդէն փախելով Ամերիկա գալու համար: Եթէ անձ մը հաւատք ունի Աստուծոյ վրայ, եւ ազատութեան՝ որ Ամերիկան է, այն ատեն այդ անձին համար՝ իր ընտանիքին եւ բախտակիցին օգտակար ըլլալու հնարաւորութիւնները անպարփակ կը մնան...», կ'ըսէ կառավարիչ Ճորճ Տէօքմէճեան, Ուաշինկթընի մէջ, Ազգային Աղօթքի Նախաճաշի մը առիթով, որուն գլխաւոր խօսողը ըլլալու հրաւիրուած էր ան քանի մը շաբաթ առաջ:

Ձիշեալ նախաճաշին ներկայ եղած են շուրջ չորս հազար ներկայացուցիչներ, ներառեալ Նախագահ Ռեյկըն, փոխ նախագահ Պուշ, Արտաքին Գործոց նախարար Շուլց, բարձրագոյն ատեանի դատաւորներ, Նախագահին դիւանին նախարարներէն շատեր, ծերակուտականներ, եկեղեցականներ, եւ ականաւոր եւ բարձր պաշտօնի վրայ գտնուող բազմաթիւ անձնաւորութիւններ:

Կառավարիչ Տէօքմէճեան շարունակաբար եւ միշտ հաճելիօրէն կը զարմացնէ մեզ իր ծագումին հետ ունեցած սերտ կապն ու պատմութեան ճմշարիտ իրադրութիւնները միշտ մատչելի դարձնելով իր բախտակիցներուն, քաղաքական դէմքերուն եւ առաջնորդներուն:

Անոասախ ճնոյշը ճշմարիտ հաւատարմութեան՝ իր ժողովուրդին հանդէպ:

«ՆՈՐ ՕՐ»

ԵՐԿՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

3 ՊԱՏԿԵՐ

Գրեց՝ Անդրանիկ Ծառուկեան

Վաթսունական թուականներուն Հայաստանի մէջ փորձ մը եղաւ հայերէն տպագրական գիրերը գեղեցկացնելու եւ նոր տառատեսակներ ստեղծելու: Ուրկէ ուր, յանկարծ ճիչ մը յուսեցաւ Սփիւռքի մամուլին մէջ, թէ հայերէն տառերը «կը ռուսացուին»: Ամբողջ վեց ամիս՝ իրարանցում, թերթէ թերթ շոնդակից յօդուածներ –«Մեսրոպ, դուրս եկիր գերեզմանէդ» – բողոքի հեռագիրներ, եւայլն. մինչեւ որ պարզուեցաւ թէ այդ լուրը մէջտեղ նետող Տարեգիրքին հեղինակը իր կարգին զոհ գացած է յաւակնոտ ճարտարագէտի մը լեզուագարութիւններուն: Այդ դէպքէն ներշնչուած է ներկայ «կատակերգութիւնը»:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Ս. Մեսրոպ միշտ նախագահի ամպիոնին վրայ. աջին՝ կողմնակի շարքով մը, երդուեալ Դատաւորները – Ց. Պարոնեան, Ց. Թումանեան եւ Ա. Արփիարեան: Ձախ կողմը՝ Սիամանթօ, բարտուղարի սեղանով, որուն կռնքած է Եր. Օտեան: Դ. Զօհրապ, իր ծանօթ կեցուածքով, բիչ մը անդին ոտքի, մէկ ձեռքը տարատին գրպանը: Անկիւն մը՝ Գաբրիէլ:

Բ. ՏԵՍԻԼ

(Նոյնք եւ Ընկ. Փանջունի)

Ս. ՄԵՍՐՈՊ.– (ընդհանուրին)·– Լսեցինք մեր պատգամաւորին զեկոյցը Երկրի մասին, եւ այժմ ծանօթ է մեզ իրաց վիճակը… Թէեւ մեր յարգելի Փանջունին արտայայտուեցաւ քիչ մը ենթակայօրէն եւ աշխարհը ներկայացուց մեզի իր նախասիրութեանց հայելիով, այսուհանդերձ որոշ գաղափար մը կազմեցինք… կարեւորը, ներկայ պարագային, իր բերած նիւթերն են, որոնք կը մնան երդուեալներու, ինչպէս եւ Պաշտօնական Փաստաբանին տրամադրութեան տակ… Դատախազ Գաբրիէլ պէտք չունի զբաղելու այդ թղթածրարով, քանի որ դէպի Երկիր տեւական իր ճամբորդութիւնները (այն մասնաւոր առաքելութեամբ՝ որուն բնոյթը աւելորդ է բացատրել ձեզի…) զինք խորհրդուած բած են աշխարհի անցուդարձերուն… Հետեւաբար, երկու ժամ դադար կը տրուի, որմէ ետք կը վերաբացուի Առեանս…

(Դադարէն ետք, Ատեանը՝ միեւնոյն կազմով եւ դիրքով)

Ս. ՄԵՍՐՈՊ.– Խօսքը կը պատկանի Ընդհ. Դատախազին…

ԳԱԲՐԻԷԼ.– Գերաշնորհ տէր Նախագահ եւ յարգելի ներկաներ… Տեսաք, կարդացիք թերթերը որ Փանջունին բերաւ վարչն, եւ որ ես ամէն օր կարդալու դժբախտութիւնը ունիմ… Մասնաւորելով խօսքս այս դատավարութեան նիւթ ծառայող խնդիրին շուրջ, պէտք չեմ գտար չեշտելու ոճրային հանգամանքը այն յանցագործութեան, որուն տխուր հերոսներն են այդ թերթերը… Կը պահանջեմ խիստ եւ օրինակելի պատիժ մը… կ'առաջարկեմ.

ա) Բոլոր հայերէն թերթերը դադրեցնել եւ միակ թերթ մը թողուլ… Նշանին համար…

բ) Խմբագիրները հաւաքել եւ վեր բերել…

ԵՐ. ՕՏԵԱՆ.– Գաբրիէլէն ուրիշ բան կը սպասէր արդէն… Միշտ նոյն «արմատական» միջոցը…

ԳԱԲՐԻԷԼ (Ե. Օտեանին)·– Դիտել տամ իմ յարգելի ընդդիմախօսին, թէ պարզապէս արդարութեան զգացումն է առաջարկիս մղիչը… Հանրայայտ իրողութիւն է, որ հայերէն թերթերը դադրելով՝ մեծապէս կը դարձին նաեւ վէճն ու կռիւը եւ անոնց հետեւանքները, ինչ որ, անձնական անկիւնէ մը դիտուած, նպաստաւոր չէ ինծի… Հակառակ իմ մասիս տիրող սխալ կարծիքին որ տարածուած է վարը – եւ աւա՛ղ, այստեղ ալ քիչ չեն թիւրիմացութեան մէջ գտնուողները… – ե՛ս ալ ընդունակ եմ զոհողութեան… Կը պնդեմ ուրեմն առաջարկիս վրայ եւ մահապատիժ կը պահանջեմ թերթերուն եւ խմբագիրներուն համար, փոյթ չէ այդ կերպով գործունէութեանս ասպարէզը սահմանափակուի… ընթերցողներու դասակարգին մէջ…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Հակառակ Առեանիս Նախագահին կողմէ վեհանձնօրէն իրեն չնորհուած «խորհրդուրդ» տիտղոսին, կը նկատեմ թէ մեր Դատախազը չատ մակերեսային ծանօթութիւն մը միայն ունի երկրաւոր իրադարձութեանց մասին… Ձուր չէ որ գաղիացիք «Բարձր Գործոց Ցանձնակատար» կոչած են զինք եւ իր մահկանացու պաշտօնակիցները… Միշտ «բարձր» գործերու մէջ ըլլալուն, ժամանակ չէ ունեցած զբաղելու համեստ գործերով…

ԳԱԲՐԻԷԼ.– Կը բողոքե՛մ, տէր նախագահ անձնական վերաւորանք է…

Ս. ՄԵՍՐՈՊ (Զօհրապին)·– Դիտողութիւնը տեղին է: Կը խնդրեմ նիւթէն չշեղիլ եւ անձնականութիւններէ հեռու մնալ…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Կը մտնեմ նիւթին մէջ: Թղթածրարին քննութիւնը յստակօրէն կը պարզէ, թէ հայերէն թերթերը եւ խմբագիրները մեզ չուենին… Իրենցմէ չատերուն անկեղծութիւնը, բարիմտութիւնը վեր է կասկածէ…

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ (Բովինեցիներուն)·– Քանի որ այսպէս ակսաւ՝ փրկուած են մերիններըը… Բախտ ունին որ յանձնուեցան Զօհրապին… Պիտի տեսնէք թէ ի՛նչպէս ձիւնի նման ճերմակ գուբս պիտի հանէ բողոքը, նոյնիսկ ամէնէն սեւ երեսները…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Ծանրագոյն մեղադրանքը որ կարելի է բերել թերթերուն, «անգիտութեամբ մեզանչում»ի ամբաստանութիւնն է, եւ այդ մասին Հռովմէական Օրինագիրքը համամիտ չէ Զուլեերիականին՝ թէ նման պարագաներու, ենթակայ պատժոյ արժանի՞ է թէ ոչ… Օսմանեան օրինագիրքը, թէեւ, յանցանք կ'ընդունի «անգիտութեամբ մեզանչումը», բայց անմիջապէս կը ճչդէ, թէ նուազագոյն աստիճանի յանցանք մըն է, որ պէտք է պատժուի պարզ դիտողութեամբ մը, կրկնելու պարագային ծանրացուելու ազդարարութեամբ…

Ե. ՕՏԵԱՆ.– (մեկուսի)·– Յայտնի եղաւ… Պոչերնին պիտի ազատեն… Եթէ պատիժին «դիտողութիւն – ազդարարութիւն» պիտի ըլլայ՝ արջուն սրինգ նուագելու պէս բան մըն է…

ԳԱԲՐԻԷԼ.– Թերթերուն մէջ գործուած յանցանքին պատասխանատուները եթէ խմբագիրները չեն, ո՞վ է հապա… Գրաչա՞րը, մեքենավա՞րը, ցրուի՞չը… Երբ գործուած յանցանք մը կայ, պէ՛տք է գոյութիւն ունենայ նաեւ յանցագործ մը… Տիար փաստաբանը կրնա՞յ միտել յանցանքին փաստական գոյութիւնը… Չի՛ կրնար, քանի որ մէջտեղ է ազդակող փաստը: Հետեւաբար, ստիպած է նաեւ ցոյց տալ մեզի յանցապարտը…

Ե. ՕՏԵԱՆ (մեկուսի)·– Գաբրիէլը այստեղ կոլ մը նշանակեց… Տեսնենք մեր երբեմնիները ինչպէս պիտի կրնայ փոխադարձել…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Երբեք նպատակ չունիմ ուրանալու յանցանքին գոյութիւնը, բայց կը գտնեմ, որ ամբաստանեալ թերթերուն մէջ չէ որ կը գտնուի իրական յանցագործը…

Ս. ՄԵՍՐՈՊ.– Փանջունին պակա՞ս բերած է արդեօք թերթերը…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Թերթերը լըման են, պակաս չկայ, բայ մեզի պէտք եղածը թերթ մը չէ, այլ գիրք մը…

Ս. ՄԵՍՐՈՊ.– Գի՞րք մը…: Տհաճելի անակնկալ… Յարդ կը կարծուէր թէ միայն թերթերն են այս կարգի թիւրիմացութեանց չեմարանը, ու տրամադիր էինք ներողամտութեան, նկատի ունենալով անոնց դժուարին կացութիւնը, օրը օրին տպագրութեան տաժանելի հարկը… Բայց երբ գիրքերն ալ կը վարակին, խիստ ծանրակշիռ կացութիւն մըն է որ կը ստեղծուի: Կ'ուզէի գիտնալ անունը այդ մատեանին եւ մասնագէրին…

ԵՐ. ՕՏԵԱՆ.– (մեկուսի)·– Այս գործին տակէն ալ Սուրէն Պարթեւեանին անունը չեմ՛ յանկարծ…

Ս. ՄԵՍՐՈՊ.– Ի՞նչպէս կը կոչուի այդ մատենագիրը, անուն, մականուն, ամբողջական տեղեկութիւն կը պահանջեմ իր մասին…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Ձեր հաւատարիմ հետեւողներէն մէկը ըլլալու է, բեղուն արտադրող մը՝ գտնելով իր լոյս ընծայած հատորներուն քանակէն… Կը տարագրէ Ծաղիկ կարօ… Ցաւելեալ ծանօթութեանց համար հարկ է դիմել Ատեանիդ դիւանատան, որովհետեւ բացարձակապէս անծանօթ մէկն է ինծի համար…

Ս. ՄԵՍՐՈՊ (Սիամանթոյին)·– Ահա մը նետէ հայ գրագէտներու անուանացանկին վրայ ու ըսէ մեզի թէ ո՞վ է այդ Ծաղիկ կարոն… Հաւանաբար ծածկանուն մը ըլլայ…

ՍԻԱՄԱՆԹՕ (փնտռելէ ետք)·– Չունի՛նք… Մեր տեղարին մէջ արձանագրուած չէ այդ անունը…

Գ. ԶՕՀՐԱՊ.– Չեմ զարմանար… երբ անփոյթ բանասեղծներուն վստահին այսքան պատասխանատու պաշտօններ, բնական է որ ստեղծուի այս դիւանական քաոսը… Առաջին անգամը չէ որ կը հաստատեմ նման զանգուռումներ, տէր Նախագահ…

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)

Para nuestra selecta y masiva audiencia

Audición Radial
"En Confraternidad Argentino - Armenia"

Un pensamiento amplio, unitario y pluralista para la comunidad armenia de la República Argentina
Con una pincelada de:

Historia - Cultura - Música - Noticias - Economía
Concursos y la participación activa de nuestra juventud, en su Año Internacional

Todos los domingos de 21:00 a 21:30
Por L.R.3. Radio Belgrano
en el 950 de su dial
PRODUCIDO POR:
LATINARMEN PUBLICIDAD S.R.L.

«Հայրենապատում»

Գրեց՝ Սերօ Խանզատեան

Արմաւիրի Մեծ Գերդաստանը



Այստեղ իւրաքանչիւր կոլտնտեսական գիտի, համոզուած է, որ այս տարի իրքը մի աշխօրի դիմաց ստանալու է 25 ռուբլի դրամ: Դեռ չենք ասում, որ այս պատկաւելի գումարից բացի, նա ստանալու է նաեւ դինի, հաց, բանջարեղէն, պահիր, իւղ: Արմաւիր լաւ գարգացել է, առողջ ու ամուր քիւերը տարածել կանաչ այգիների մէջ: Այստեղ աշխօրը արժէք ունի: Բայց արմաւիրցին մէկ աշխօրին 50 ռուբլի կը ստանայ, եթէ չլինեն մի չարք խանգարիչ հանգամանքներ: Ահա դրանցից մէկը, կարեւորը:

–Մեր գիւղը պէտք է զբաղուի միայն խաղողագործութեամբ, – ասում են մարդիկ: –Խաղողը տասնապատիկ ուեւելի եկամուտ է տալիս, քան բամբակը:

Ինչո՞ւ չզարգացնել այն կուլտուրան, որից աւելի շատ եկամուտ կարելի է ստանալ:

Արմաւիրում այս տարի այնպիսի խաղող են աճեցրել, որ եթէ անկորուստ հաւաքեն եւ ինչպէս կարգն է պատրաստեն պտուղեղեան՝ չորս միլիոն եկամուտ կը ստանան: Սա աշխատաւոր, ազնիւ մարդկանց մի մեծ ու համերաշխ գերդաստան է:

Արմաւիրը հինգ–վեց հազար տարեկան է՝ հին աշխարհի հին մայրաքաղաքներին հասակակից: Քաղաքիս մէջ–նաբերդը եղել է բլրի վրայ եւ, ինչպէս ստոյգ չափել են հնէաբանները, 76 մեթր բարձրութիւն ունի: Այս բլրի չորրէ է փռուել Արամանեակի ստեղծած ոսկեայ անտառը, որտեղ գուշակութիւններ էին անում ծառերի սաղարթների օսոփիւնով: Ցոյն Պղոմէոսը եղել է այս քաղաքում (90–160) եւ հիացել նրա հարուստութիւններով: Հռչակաւոր Արմաւիր քաղաքում (776 թուականին մ.թ.ա.) պատահեր է ստեղծել նաեւ հայոց Արգիշտի Ա–ի թագաւորը, անունը դրել Արգիշտիխինիլի: Մեր ինքնոյն պետականներից մի քանիսը հիմա էլ, առանց հիմնաւորելու եւ տրամաբանելու, հայոց այս քաղաքն ու թագաւորական հարստութիւնը (դիւնաստիա), որ յայտնրդել է Հայկազուն տանն ու նրա ժառանգն էր, կարում են հայկական էութիւնից ու կեանքից եւ համարում «Ուրարտու–ուրարտական»: Սա ոչ պատմական է, ոչ էլ գիտական: Նման կերպ մտածողները հաւանական է չգիտեն որ Արգիշտի (Արգիստի) Արա–Արա–մազիս–Արամանեակ բուն հայկական անձնանունների մի տարբերակն է՝ կապուած Արա (էր) հայոց հին աստուածութեան հետ: Նաեւ ասեմ, որ Արգիշտի–խինիլի տեղանուան «խինի» մասնիկը ընդհ հայկական է եւ այսօր էլ գործ է ածւում Սիւնիքի ու Արցախի խօսուածքում՝ իբրեւ «չառ» նշանակութիւն: – Խինի գընացի: – Շատ տեղ գնացի: – Խինի մարդ կկաս: – Շատ մարդ կկաս եւ այլն: Սա նախորդել է «չառ» իմաստին, ինչպէս Արաս–չառ: Արչամա–չառ, Երուանդաչառ եւ այլ տեղանունների մէջ: Ուրեմն, Արգիշտիխինիլի–նին պէտք է հասկանալ Արգիշտի–չառ:

Արմաւիրի քաղաքը չըրջապատած է եղել երեքուկէս մեթր հաստութեամբ իրար զուգահեռ երեք պարսպով, որոնց հիմքերը հիմա էլ երեւում են:

Բրիգադիր Վարդգէս Ստեփանեանի հետ պատում եմ գիւղում: Ամէն տեղ կառուցումներ են անում: Ինձ հիացնում է Արմաւիրի կուլտուրայի պալատը, որ նոր են չինել: Սա խիտ նման է Գառնիի տաճարին, յատկապէս ճակատային սիւնազարդ մասը: Մի քիչ հեռու կառուցում են Հայրենական պատերազմի զոհերի յուշարձան: Հնդարեան Արմաւիրի այս չէնացումը Աբեւելեան Հայաստանի հրաշալի բարգաւաճման ամենից չօչափելի օրինակներից մէկն է:

1979, Նոյեմբեր: – Նորից եմ եկել Արմաւիր գիւղը: Ընթանալիի պարզ, նաեւ բաւականին տաք օր է: Երեւում է ողջ դաշտն Արմաւիրական, որ չողում է ուշ աշնան բոլոր գոյներով: Ուշ եմ ասում, չէ՞ որ Նոյեմբերի 22 է: Դեռ գիւղ չտնած երեւում է գոհերի յուշարձան կոթողը՝ բարձր քարէ սիւն, գլխին արագիլի խոշոր բոյն: Հրաշալի է, արագիլը կեանքի յարատեւման իր բոլջինչ է հիւսել գոհերի յիշատակին կառուցած այս քարէ կոթողի բարձր, չատ բարձր գագաթին:

Քիչ առաջ գտնւում էի Հոկտեմբերեանի քաղաքի «Փառնիտուրայի» գործարանում: Սա նոր բան է: Այստեղ աշխատում են նաեւ արմաւիրցիներ: Ես գործարանի դիրեկտոր Կարլէն Արրահամեանին տարցնում եմ.

– Կը ներես ինձ՝ տգիտութեանս համար, Կարլէն, ի՞նչ բան է «Փառնիտուրա» ասածդ:

– Կոճակ, – պարզ բացատրում է նա: – Մարդու զգեստի համար կոճակ եւ նման մի երկու առարկայ, որ արտադրում ենք մենք:

– Շատ լաւ, նո՞ր է գործածրանը:

– Մի քանի տարուայ:

– Բայց ես այստեղ եղել եմ, հենց այս սենեակներում, այս դահլիճում եւ չատ առայ: Շէնքը հին է:

Այո, այս չէնքը մի ժամանակ պատկանել է Հոկտեմբերեանի բամբակագործ գործարանին: Այժմ բամբակ չի ցանում Հայաստանը (1964 թրւից) եւ պարզ է, բամբակ գըտելու բան չկայ: Լաւ են արել, հին մեծ գործարանին չէնքերում տեղաւորել են թէ այս կոճակի «Փառնիտուրան» եւ թէ այլ ձեռնարկութիւններ: «Փառնիտուրա»: Մի նմոյշներ բերէք տեսնեմ ինչ բան է: Եւ բերում են տուփագեղեցիկ վրայ կպցրած կոճակներ, այն էլ վաճառուն տեսակի՝ փոքր, մեծ, սպիտակ, գունաւոր: Հարցնում եմ ինչ նիւթից են պատրաստում այս գեղեցիկ զարդակոճակները:

– Պլաստմասայից ու քիմիական այլ խառնուածներից, – պատասխանում է Կարլէն Աբրահամեանը: – Մի տարում մեր գործարանն արտադրում է 150 միլիոն կոճակ:

Հրաշալի է: Ես փչում եմ եւ քսանվեց–քսանեօթնեանոց թուականներին մեզ մօտ՝ Գորիս քաղաքում ստեղծուած կոճակի գործարանը, որի գիրեկտորը ռուս մարդ էր կաշխրին ազգանունով, որ ամուսնացաւ մեր քաղաքի որը աղջիկ Շուշանիկի հետ: Ա՛յն ժամանակ մենք սար ու ձոր ընկած ոսկոր էինք հաւաքում, բերում տալիս կաշխրինին, չգիտեմ փոքը քանի կոպեկով, եւ կաշխրինը հրաշալի կոճակ էր արտադրում: Ենքան էինք ուրախացել... Չէ՞ որ մեր քաղաքը իսկական գործարան ուներ:

Հոկտեմբերեանի կոճակներից մի քանիսը խիստ նման են մօտիկ Արմաւիր մայրաքաղաքում կատարուած պեղումների ժամանակ յայտնաբերուած հին, չատ հին ոսկէ ու բրոնզէ զարդերին, կոճակներին, ճարմանդներին:

– Մեր գործարանում 488 աշխատող կայ, – տեղեկացնում է Աբրահամեանը:

Մի բանում էլ ենք չահել՝ մարդ չատ է աշխատում այստեղ: Երբ եղել է բամբակագործ գործարան, ընդամէնը երեք հարիւրից մի քիչ աւելի մարդ է աշխատել:

Մեր գիմացն Արարատն է: Երբեմն Մասիս եմ գրում, երբեմն՝ Արարատ եւ սխալ չըկայ: Արեւմուտքում դէպի Հայկական Պարի լեռներն է իջնում արեւի ամենամուտի կարմրած գունդը: Հիմա կը պայթի ու մէկ անգամ էլ արեւմտի ի՛ուռդի հայոց աշխարհի Ակեւմուտքը, որ գրաւուած է մեզանից:

Արմաւիրում այսպիսի հրաւիրատոմսեր են տարածւել: Ահա դա: – «Հրաւիրատոմս, Յարգելի ընկեր... Արմաւիրի գրադարանում սեպ Նոյեմբերի 22–ին ժամը 18–ին կազմակերպուած է գրական երեկոյ, նուիրուած սովետահայ արձակագիր Սերօ Խանզադեանի գրական գործունէութեանը: Կարգ 4, տեղ 15–16: Գրադարանի խորհուրդ»:

Հանդիպում եմ գրադարանի տնօրէնուհի տիկնոջը, որին վաղուց եմ ծանօթ: Նոյնն է մնացել, չի ծերացել:

– Քսանեօթ տարի է գրադարանում եմ աշխատում: Ես իմ կեանքը կապել եմ գրքերի աշխարհին: Եւ չատ գոհ եմ:

Մի սիրունիկ տղայ եկել է գրադարան–ընթերցարանից գիրք տանելու: Տասներկու տարեկան է: Յարցնում եմ անունը, պատասխանում է Գրիգոր Վարդանեան: Մորթէ օձիքով լաւ կարած վերարկու ունի: Նա ասում է, թէ իրենց տանը հինգ հարիր կտոր գիրք կայ, բայց էլի օգտւում է գրադարանից: Միայն այս տարուայ Մարտի տասներկուսից մինչեւ օրս գրադարանից տասնհինգ գիրք է վերցրել: Այդպէս է, ես նայեցի նրա քարտն ու հաշուեցի, այսօրուայ վերցրածը կը լինի տասնվեցերորդ: Ես նրան հարցրի.

– Ի՞նչ գիրք ես չատ սիրում, Գրիգոր:

– Հեքիաթներ,– իսկոյն պատասխանեց նա: – Տոլստոյ, Թումանեանի, Գրիմ եղբայրների, Ստ. Զօրեանի հեքիաթները:

Ինձ մօտեցաւ մի բարեկիրթ մարդ, ներկայացաւ:

– Ես Վարդան Յակոբեանն եմ: Իմ հայրը պատերազմի ժամանակ եղել է ձեր հրամանի տակ եղած վաշտում:

Ես չչմած նայում եմ նրան: Հաւանական է, ի՞նչ կայ որ: Կարծես ազատ յիշում եմ նման մարդու: Վարդան Յակոբեանն ինձ է տալիս իր ձեռքով գրած մի քանի տեղեկութիւններ, որ ես մէջ եմ բերում ամբողջովին՝ մասնակի կրճատումներով:

– «Հոկտեմբերեանի շրջանի Արմաւիր գիւղի բնակիչ Նահապետ Մուսոյեան, 1898 թրւի ծնուած... 1942 թուին նորից զօրակոչուել է կարմիր բանակ եւ կռուել Մեծրազմեան ազգամաքառում, որպէս «մինոմետչիկ»: Ծառայել է այն վաշտում, որի հրամանատարը եղել է Սերօ Խանզատեանը... Չոհուել է 1945 թ. Ապրիլի 23–ին Լաուտիական ՍՍՀ Պեարկոլի քաղաքի ազատագրման համար: Նահապետ Մուսոյեանի հետ մէկտեղ Հայրենական պատերազմի ժամանակ «Փրնտում» էին գանւում նրա երկու որդիները՝ Վարդան եւ Ալբերտ Յակոբեանները...»:

Ես նայում եմ իմ խօսակցին եւ խոր հարազատութիւն զգում դէպի նա: Ազօտ կերպով յիշում եմ նրա հօրը՝ Նահապետին: Բայց նրա գոհուելը չեմ յիշում: Ըստ երեւոյթին այդ քաղաքի արմաւիրցին իմ վաշտից կամ տեղափոխուել է այլ զօրամաս, կամ վիրաւորուել եւ առողջանալուց՝ նորից այլ զօրամաս ընկել: Այդ այդպէս է, քանի որ իմ ականատեսին վաշտը 1945 թուի Ապրիլին եղել է Քէօնիգզերբգում: Այդ քաղաքը մենք առել ենք Ապրիլի ութին: Ես Վարդանին հարցնում եմ՝ էլ ի՞նչ տեղեկութիւն ունէք ձեր հօր մասին:

– Նա իր նամակներում գրել է, որ դուք էք եղել իր վաշտի հրամանատարը: Այդ նամակները չեմ գտնում, հնարաւոր է կորել են: Եթէ գտնեմ, կը բերեմ ձեզ ցոյց կը տամ:

– Ինչպէ՞ս վերջացրիր պատերազմը, – հարցնում եմ Նըրան:

– Ես պատերազմին մասնակցել եմ սկզբից, – ասաց նա: – Եղբայրս Ալբերտը ռազմաճակատ է եկել 1942–ին: Սեւաստոպոլի մօտ վիրաւորուել է ու վերադարձել տուն: Ես ետ եմ եկել յաղթանակից յետոյ՝ վիրաւոր: Եղել եմ գիշտոպեմի նախագահ, սպա բրիդագիր: Հիմա էլ եմ աշխատում կոլխոզում, թէեւ Հայրենական պատերազմի հաշմանդամ եմ ու աշխատանքի վետերան:

Վարդանի մի եղբայրը, որ չատ փոքր է եղել պատերազմի ժամանակ, հիմա կոլտնտեսութեան գիւղատնտես է:

Հանդիպումը կայանում է պալատի ընդարձակ գրադրանում, որտեղ տաք է: Շատ մարդ է հաւաքուած: Վարդան Յակոբեանը նստած է հենց իմ կողքին եւ ես զգում եմ ռազմաճակատի այրուող հողի հոտը: Պատուհանից երեւում է գոհերի յուշարձանը եւ ինձ թւում է, թէ ես նրա մէջ տեսնում եմ նաեւ իմ զինուոր Նահապետի հոգիները:

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 3)

C'RUGIA GENERAL
DR. NICOLAS HERMES
Jefe Emérito del Hosp. Fernández
Pueyrredón 854 3° B
Solicitar hora: 783 - 0711

DR. ARTURO BALASSANIAN
Escribano
Florida 716 - 2° P. of. "K" Tel: 392-2768/3065
Lunes a Viernes de 10.00 a 18.30 HS.

Ժամանակացոյց Զատկական Տօներու Արարողութեանց՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ

31 Մարտ, ԿԻՐԱԿԻ ԾԱՂԱԿԱԶԱՐԴ – *Սկիզբ ժամերգութեան առաւօտեան ժամը 9–ին։ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ 10.30–ին։*

Պատարագիչ եւ քարոզիչ Հոգշ. Տ. Գիւսակ Վրդ. Մուրատեան։

Երգեցողութիւնը պիտի կատարէ «Դասերք Վարդանանց» կրգ.խումբը։

ԴԻՒՐԱԶՔԻ, երեկոյեան ժամը 5–ին։

2 Ապրիլ, ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ – *Մայր Եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 5.30–ին տեղի պիտի ունենայ ժամերգութիւն եւ ապա ընթերցում ԻՄԱՍՏՈՒՆ ԿՈՒՍԱՆԱՑ առաքեալական դրուագին։*

4 Ապրիլ, ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ – *Սկիզբ առաւօտեան ժամերգութեան ժամը 9–ին։ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ 10.30–ին։*

Ցիշատակ ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻԱՑ եւ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ հաստատման։ Պատարագիչ Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան։

Երեկոյեան ժամը 5–ին ԿԱՐԳ ՈՏՆԼՈՒԱԾԻ։

Երգեցողք «Դասերք Վարդանանց» Ղեկավարութեամբ՝ Հոգշ. Տ. Ցարութիւն Ծ. Վրդ. Մուշեան։

ՒԱՒԱՐՈՒՄ.– Սկիզբ արարողութեանց երեկոյեան ժամը 7.30–ին։

5 Ապրիլ, ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ – *Մայր Եկեղեցւոյ մէջ ԿԱՐԳ ՒԱՉԵԼՈՒԹԵԱՆ՝ առաւօտեան ժամը 11–ին։*

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ՝ երեկոյեան ժամը 7.30։ Կը մասնակցին եկեղեցւոյ զպիրներն ու «Դասերք Վարդանանց» երգչախումբը։

6 Ապրիլ, ԱՒԱԳ ՇԱԲԱԹ – *Առաւօտեան ժամը 9–ին ժամերգութիւն եւ ապա տեղի պիտի ունենայ զպրոցական աշակերտներու համար մասնաւոր խոստովանանք եւ պիտի մատակարարուի Ս. Հաղորդութիւն։*

Երեկոյեան ժամը 6–ին ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԽԹՄԱՆ. ժամերգութենէն վերջ Ս. ՊԱՏԱՐԱԳ, զոր կը մատուցանէ Հոգշ. Տ. ՑԱՐՈՒԹԻՒՆ Ծ. Վրդ. Մուշեան։

Ցաւարտ Ս. Պատարագի, Առաջնորդարանի դահլիճին մէջ ՏՆՕՐՀՆԵԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ։

7 Ապրիլ, ՉԱՏԻԿ ՑԱՐՈՒԹԵԱՆ – *Սկիզբ պաշտամանց՝ առաւօտեան ժամը 9–ին։*

Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ժամը 10.30։ Քարոզ՝ ժամը 11.30–ին։ Պիտի պատարագէ ու քարոզէ Գերշ. Տ. Գրիգորիս Եպս. Բունիաթեան։ Երգեցողութիւնը պիտի կատարէ՝ «ԿՈՒԻՄԻՏԱՍ» երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Օրդ. Մաքրուհի Իօլմէյեքեանի։

8 Ապրիլ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՄԵՌԵԼՈՑ – *Մայր Եկեղեցւոյ մէջ ժամերգութիւն եւ Ս. Պատարագ եւ ապա հոգեհանգստեան պաշտօն ընդհանուր ննջեցելոց համար։ Պիտի պատարագէ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Մանեթեանեան։*

ՇԱՆՕԹ.– Ա.– Զատկական տօներու առիթով Ոտնլուայի եւ Թաղման արարողութեան գերեզմանին համար իւղ եւ ծաղիկ նուիրողներէն կը խնդրըուի ժամանակին յանձնել զանոնք Եկեղեցւոյ Պայծառութեան Յանձնախումբին։

Բ.– Կը յիշեցնենք նաեւ մեր բարեպաշտ ժողովուրդին որ տօնական այս օրերուն չմոռնան իրենց իւղագինը։ Եղէ առատաձեռն եւ Տէրը պիտի օրհնութեամբ վարձահատոյց ըլլայ ձեզի։

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Սուգի եւ Ուխտ...

(Շար. 10րդ. էջէն)

Նահատակներու սուգին մէջ եւ յիշատակին հանդէպ՝ այսօր 70 ամեակի սեմին, զոր պատշած պատրաստութիւններ կը տեսնուին միասնականութեամբ տօնելու նահատակներուն յիշատակը, գերագոյն ուխտը կը մնայ պահպանումը հայ ժողովուրդին, իբրեւ ազգային ամրոցութիւն։ շաղախուած, համախուռնած իտէալի նպատակներու եւ գործելակերպի միութեամբ. ազատագրուած Հայաստանի վերականգնած հայրենի պետութեան, վերածնող ազգային մշակոյթի առանցքներուն շուրջ եւ դիմելով դէպի ամրողջական Հայաստանի տեսլական նշանակէտին իրագործումը։

Լուսեղէն այդ իրականութիւնը նաեւ կենսարար մըխիթարութիւնն է եւ մահուան անդունդէն յարութեան մարմնացումը։ Ապրիլեան մեր ցաւագին սուգի մէջ։ Եւ տակաւին բաղդրութիւնն ու փառքը մեր շըքեղ փոխվրէժին։ Որովհետեւ ահա՛ դահիճը, կողոպուտի, աւերումի ու սպանդի իր գազանային ոճիրէն ետք, եւ դաշնակից երկիրներէն իրեն բաշխուած միլիոնաւոր տոլարի հսկայական նպաստներէն յետոյ, տակաւին կը մնայ ան, թուրքը, նոյն մուրացկան, վայրի ու մակաբոյծ թշուառը, իսկ գոհը.– հայը՝ մոխիրներէն, մահարաւներէն, գաղթակայաններէն հրաշալի վերականգնումով մը ոչ միայն փառաւոր հայրենիքի մը կը կերտէ, այլ նաեւ իր ոգեկան վեհութեան ու իմացական հանճարին զմայլելի շնորհները կը նուիրէ մարդկութեան, արուեստով, գիտութեամբ ու կառուցումով։

ՍԵՒԱԶՈՒՀԻ

Թլկատինցու...

(ՇԱՐ. 11րդ. ԷՋԷՆ)

գին Սրվանձտեանց», Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան, 1970, Նո. 1, էջ 127)։ Աւելին, Սրուանձտեանցին է պատկանում պատիւը, որպէս «Սասունցի Դաւիթ»ի առաջին պատումի յայտնաբերողի, որը անգնահատելի ծառայութիւն է մեր բանասիրական գրականութեանը։

Գաւառական գրականութեան զարգացման եւ ծաղկմանը նպաստել է նաեւ Պոլսի իրապաշտ գրողների հոսանքը, որն առաջացաւ 80–ական թթ.։ Ար. Արփիարեանի, Գ. Զօհրապի, Լ. Բաշալեանի, Տ. Կամսարականի, Հրանդի (Մելքոն Կիւրճեան) գլխաւորութեամբ։ Պոլսահայ իրապաշտները, արեւմուտքի, յատկապէս Ֆրանսայի ռեալիստական ուղղութեան ազդեցութեան տակ, հակազդեցով մինչ այդ գրականութեան բնագաւառում իր գոյութիւնը պարտադրող ռոմանտիկ ինքնագիր եւ թարգմանական գրականութեան, պայքարում էին տիրող ըմբռնումների դէմ, ստեղծագործական թեմատիկան փոխադրում սոցիալական հարցերի չուրջ, մերկացնում «եւրոպականացող» անոտի բարքերն ու սովորութիւնները, կրօնական եւ համայնքային վարիչների կեղծիքներն ու անապարծութիւնները։ «Կեանքը ինչպէս որ է» (Գ. Զօհրապի ծանօթ ժողովածուի վերնագիրը) նշանաբանով, թաղական ազաներին, վսեմաչուք–ազնըուականութիւններին հակադրում էին

Նամակ՝
Խմբագրութեան

20 Մարտ 1985

Մեծայարգ
Տիար՝
Նահապետ Նահապետեան
Ցարգելի Տնօրէն
«Մարտարապատ»

Պարտք կը զգամ քանի մը տողով յայտնել չնորհակալութիւնս խմբագրութեանդ։

Իսկապէս գոհունակութեամբ կ'ստանամ զայն, քանի որ իմ առանձնութիւնս կը մեղմացնէ եւ զիս տեղեակ կը պահէ հայկական կեանքին։

Հաճոյքով կը կարդամ թէ հայերէն եւ թէ սպաներէն բաժինները։ Թերթին ուղղութիւնը չիտակ է՝ եւ անաչառ։ Ճշմարտութեան կողմնակից ըլլալուն կը գնահատեմ զայն։

Ինքս Հայ Աւետարանական եղբայրութեան եկեղեցիին անդամ ըլլալուս, կը խնդրեմ Աստուծմէս որ՝ հայ ազգիս արթնութիւն մը տայ եւ մեր նահապետներուն քալած ճամբային քալենք եւ զԱստուած փառաւորենք։

Յաջողութեան մաղթանքներով եւ չնորհակալութեամբ՝ կը բարեւեմ Ձեզ։

Ցարգանօք՝
Երանուհի Պալեաչեան
ՊՈՒԵՆՈՍ ԱՑՐԷՍ

խոնարհ խաւերի ներկայացուցիչներ՝ սպասուհիներ, ծառաներ, տնտեսներ, վարժապետներ, Զոլին, վաչխառուին, վաճառականներուն հակադրւում էին արհեստաւորներ, ծառայողներ, ըրջանաւարտներ եւ համեստ աշխատաւորների կերպարներ՝ իրենց հոգու ազնուութեամբ եւ բնաւորութեան մաքուր գծերով։

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ 1)

CONVOCATORIA

De acuerdo con las disposiciones estatutarias, el CONSEJO DIRECTIVO de la UNION GENERAL ARMENIA DE BENEFICENCIA invita a los señores asociados a participar en la Asamblea General Ordinaria que se realizará el Sábado 13 de abril de 1985, a las 17:00, en la sede de la Institución, Armenia 1322, Capital Federal, a los efectos de considerar el siguiente

ORDEN DEL DIA

1) Consideración de la Memoria, Inventario, Cuenta de Gastos y Recursos y Balance General al 31 de Diciembre de 1984.

2) Elección de tres socios para formar la Junta Electoral y firmar el acta de la Asamblea.

3) Varios

4) Elección de 4 miembros titulares para integrar el Consejo Directivo por tres años en reemplazo de los consejeros, Sres. Rolando Bergamali, José Youssefian, Roberto Malkassian y José Narkizian, que terminan su mandato.

5) Elección de 5 vocales suplentes por un año en reemplazo de los Sres. Alberto Basmadjian, Juan Kapelian, Varuyan Tchokaklian, Shushan Ekshian y Dicran Dicranian que terminan su mandato.

6) Elección de Síndico Titular y Síndico Suplente con mandato por un año, en reemplazo de los Sres. Pablo T. Sarafian y Rafael Balassanian.

Buenos Aires, Marzo de 1985

DE LOS ESTATUTOS: "Las Asambleas se celebrarán a la hora indicada con la asistencia de la mitad más uno de los socios activos, o con cualquier número transcurridos treinta minutos de la hora de citación".

SOUVENIR EN CERAMICA

MARTA DE NOURIAN

Enlace - Compromiso - 15 Años - Bautismo

Cumpleaños - Aniversario

CASTILLO 1488 — 854-3782

CAPITAL — De 14:00 a 18:00 Hs.

U.G.A.B. - U.G.A.B. - U.G.A.B.

Desde el viernes 22 de marzo, cada viernes, los padres y alumnos de las promociones 1985/86, lo esperamos para disfrutar de las exquisiteces de la comida armenia, en un ambiente de gran calidez, con la atención más cordial.

Será para nosotros un honor contarlo a Ud. con sus familiares y amigos, entre los asistentes a las habituales comidas de los viernes.

Además, este año una novedad: MENU JUVENIL, a un precio promocional.

INS. MARIE MANOOGIAN

Necesita Celadora

Idiomas armenio y castellano

GALICIA
Y
RIO DE LA PLATA

Compañía de Seguros

Bartolomé Mitre 777 7° "B" T.E.: 566-7073 · 49-1886/1942

Garantiza asesoramiento integral sin cargo para toda la colectividad armenia, a través de:

SEGUROS LAMAS

INFORMES EN U.G.A.B.

AUTOMOVILISMO:

Otra vez la mala suerte perjudicó a Gustavo

Otro fin de semana sin suerte para Gustavo Der Ohannesian. Para la carrera que se disputó en el nuevo autódromo de la ciudad de Avellaneda (provincia de Santa Fe) el domingo 24 de marzo ppdo., Gustavo había hecho el mejor tiempo de clasificación.

Largó en primera posición en su serie y luego de liderarla por más de dos giros, tuvo un despiste que provocó su abandono.

La primera serie fue ganada por su compañero de equipo, Angel R. Monguzzi, y la segunda, por Fernandino.

Luego de infructuosas gestiones ante autoridades de la competencia, y después de una largada fallida en la final, que ocasionó el abandono de tres competidores, Gustavo fue autorizado a correr para la final definitiva, en la que largó en última fila.

Der Ohannesian fue escalando posiciones espectacularmente hasta lograr el tercer puesto y pelear el segundo con intenciones de ganar la carrera, pues su auto era el más veloz. Pero, desgraciadamente, un problema en la planta motriz, lo obligó a levantar el pie del acelerador para no dañarla, hecho que ocasionó su abandono.

La carrera fue ganada por Fernandino, seguido por C. López y Daniel Sancho.

POSICIONES EN EL CAMPEONATO: C. López (20 puntos), Oltra (23 puntos), G. Der Ohannesian (20 puntos), Fernandino (20 puntos).

Creemos que esta racha se va a revertir, cuando el próximo fin de semana Gustavo se presente con el Fórmula 2 Codasur en el circuito de Tarumá, en Porto Alegre, Brasil. ¡Pra frente, Gustavo!

Juan Pablo Gechidjian

Buscan familiares

La Sra. **Sirarpi Kuramadjian de Derderian** busca a su hermano, **Vramshabuh Mihraní Kuramadjian** y a sus hijos; a su sobrino **Yirair Kuramadjian**, hijo de su otro hermano, **Zareh Kuramadjian**, y a su primo, **Vahram Garabedi Djanikian.**

La madre de Vramshabuh y Sirarpí Kuramadjian se llamaba **Arpiné.** Hasta 1932, Vramshabuh residía en los EE.UU., desde donde mantenía correspondencia con su hermana. A partir de esa fecha se habría trasladado a la Argentina con el nombre de Charles FAy.

Con respecto a Vahram Djanikian, el nombre de su madre era **Aghavní** y su hermana se llamaba **Zabel.**

Vahram se habría establecido en los EE.UU. en 1922, tras haber emigrado de Estambul.

A quien pueda dar datos acerca de estas personas se le ruega que se comunique con la Sra. Sirarpí Derderian a:

Alaverdian 37,
Ereván 10,
ARMENIA

Cocina

Rosca de Pascuas

INGREDIENTES:
50 grs. de levadura de cerveza,
media taza de leche tibia,
650 grs. de harina,
5 huevos,
200 grs. de azúcar,
100 grs. de manteca derretida tibia,
1 cda. de agua de azahar,
1 cda. de raliadura de limón.

Crema pastelera:
200 grs. de azúcar,
50 grs. de harina,
3 huevos,
1/2 litro de leche,
vainilla líquida.

Optativo:
azúcar en terrones o granulada.

PREPARACION:
Disolver la leche con la levadura.

Agregar 150 grs. de harina y batir hasta que se obtenga una masa blanda.

Tapar y dejar levar en el mismo tazón hasta que adquiera el doble de su volumen.

Batir los huevos y el azúcar; luego agregar la manteca, el agua de azahar y la ralladura.

Poner el resto de la harina sobre la mesa y en el centro, colocar la masa levada, los huevos, la manteca, etc. Unir todos los ingredientes formando una masa blanda. Trabajarla hasta que quede suave y bien ligada.

Colocar en una placa grande, enmantecada y enharinada, dándole forma de bollo de unos 6 cms. de altura.

Practicar una abertura en el centro de la masa, ayudándose con los dedos, e introducir un cortapastas de 5 ó 6 cms., enmantecado y enharinado, que se dejará hasta el final de la cocción para que no se deforme.

Dejar levar en la placa hasta el doble de su volumen o preparar 2 ó 3 roscas por separado.

Llevar a un lugar templado.

Una vez levado, decorar la superficie con crema pastelera.

Pintar la rosca con huevo y salpicar con azúcar granulado o azúcar en terrones muy pequeños.

Cocinar en horno a temperatura moderada, durante 45 minutos.

NOTA: Si se desea dividir la masa en 2 ó 3 roscas, la cocción es de 20 a 30 minutos.

Para la crema pastelera: Unir todos los ingredientes señalados y cocinarlos.

I.T.

Profesionales:

San Pablo:

ROSANY GDIKIAN

En diciembre ppdo., finalizó sus estudios de Enfermería, en San Pablo, Brasil.

Son sus padres, George y Any Gdikian.

ARTURO M. KESHISHIAN

Finalizó sus estudios universitarios en la Universidad Tecnológica Nacional, con el título de ingeniero industrial.

Son sus padres, Arturo y Mary Keshishian.

SILVIA E. DERGARABETIAN

Se recibió de guía de turismo y coordinadora internacional, tras haber finalizado sus estudios en el Instituto Superior de Turismo "Perito Moreno" de esta capital.

Son sus padres Barkev y Lucy Dergarabetian.

En venta:

"Cocina Armenia e Internacional"

con las recetas de SARDARABAD



Adquiéralo personalmente en:
Niceto Vega 4779. Capital.
o por correo, enviando este cupón:

SOLICITO EL ENVIO DE "COCINA ARMENIA E INTERNACIONAL"

Nombre:.....
Domicilio:.....
Localidad:.....**Código:**.....
Adjunto cheque N°:.....**Banco:**.....

Valor de la obra: $ a 2.500 más gastos de envío $ a 250

(cheques a la orden de Periódico Armenio Sardarabad -no a la orden-)

ESTUDIO JURIDICO

Dr. Bautista Kuyumdjian
Dr. Gabriel E. Williams
Dra. Patricia Kuyumdjian de Williams

Tucumán 1438 - Piso 7°
Tel. 40-6809/7112/49-7049

EL PROFESIONAL LOS RECETA BARTAMIAN LOS DISEÑA SU HIJO LOS PREFIERE LINEA PIE/RECTOR DE ORTOPEDIA BARTAMIAN

PLANTILLAS CORRECTORAS

Ortopedia Bartamian también las pone a sus pies.

ARTICULOS DE ORTOPEDIA EN GENERAL

Descuentos desde el 30% a Obras Sociales.
Consulte con su Obra Social sobre otros beneficios.

ORTOPEDIA DE Bartamian

Av. Belgrano 1699 Tel. 45-5213 Bs. As.
Av. 7 N° 1134 Tel. 3-4935 La Plata

RIGAR'S

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL TEKEYAN

Redacción y Administración
Cnel. Niceto Vega 4779
1414 -CAPITAL FEDERAL
T.E.: 771-2520
Horario de atención: Lun. a vier. de 10.00 a 19.00 hs.

Registro Nac. de la Propiedad Intelectual 278.315

Director
NAHABET NAHABETIAN

Corresponsalía, receptoría de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap. 84
Cep. 00579 -SAN PABLO
T.E.: 813-6791

URUGUAY
Dr. Pedro Danielian
Dionisio Coronel 129
T.E.: 39-8828. MONTEVIDEO

CORDOBA
Sr. Luis Sourenian
Camacuá 146
5.000 -CORDOBA-
T.E.: 51-4693